

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի՝ 2013 թ.-ի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի ուղղությամբ տարված աշխատանքների վերաբերյալ

2013 թ. փետրվարի 28-ին թիվ 186-Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը հաստատեց Հայաստանի Հանրապետությունում 2013-2015 թվականների ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման չորրորդ ազգային ծրագիրը, որը մշակվել էր ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի կողմից:

2013 թվականի հունիսի 20-ին ԱՄՆ Պետքարտուղարությունը հրապարակեց մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վերաբերյալ 2012 թվականի տարեկան զեկույցը:

#### **Զեկույցի համաձայն, Հայաստանն առաջին անգամ դասվել է 1-ին խմբում:**

Զեկույցում մասնավորապես ասվում է. «Հայաստանի կառավարության կողմից ձեռնարկված քայլերն ամբողջությամբ համապատասխանում են թրաֆիքինգի վերացման նվազագույն չափանիշներին: 2012 թվականին կատարելագործվել են իրավապահ մարմինների, ինչպես նաև պաշտպանությանն ուղղված աշխատանքները, Հայաստանի պաշտոնյաներն ամուր գործընկերային հարաբերություններ են ունեցել քաղաքացիական հասարակության հետ, շարունակվել են ուսուցումները հարյուրավոր պետական աշխատողների համար, ՀՀ կառավարությունը շարունակել է ներդրումներ կատարել թրաֆիքինգի զոհերի կացարանի համար և ձեռնարկել է մեծ ջանքեր թրաֆիքինգի կանխարգելման ուղղությամբ»:

2013 թ. մշակվեց «Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» օրենքի նախագիծը, որն արդեն անցել է ՀՀ արդարադատության նախարարության փորձաքննությունը և թարգմանվել է անգլերեն լեզվով: Օրենքի նախագիծը ներկայումս գտնվում է ՀՀ նախագահի աշխատակազմում:

Մշակվել է «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերին միանվագ դրամական փոխհատուցման նշանակման և տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

2013 թ. հունիսի 6-ին ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի նիստերի դահլիճում կայացավ ամենամյա մրցանակաբաշխություն՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) երևույթի և դրա դեմ պայքարի վերաբերյալ լավագույն լրագրողական լուսաբանման համար: Մրցույթը հայտարարվել էր ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդի կողմից՝ խրախուսելու համար այն լրագրողներին և հեղինակներին, ովքեր իրենց աշխատանքներում անդրադառնում են այդ երևույթին, հանրությանը տեղեկացնում դրա բացասական ազդեցությունների մասին, մատնացույց անում ելքերը:

Մասնագիտական ժյուրիի որոշմամբ՝ "Հեռուստատեսություն և ռադիո" անվանակարգում առաջին տեղին է արժանացել «Ազատություն» ռադիոկայանի լրագրող Անուշ Մկրտչյանը՝ "Թող հավատան, որ կյանքը սրանով չի ավարտվում" ռադիոնյութի համար, նույն

անվանակարգում երկրորդ և երրորդ տեղերը համապատասխանաբար զբաղեցրել են հեղինակներ Դիանա Ավետիսյանը՝ "Սոցիալական ցանցերը կարող են դառնալ թրաֆիքինգի ցանցեր" և Անի Մանուկյանը՝ "Ստրկությունից մինչև թրաֆիքինգ" տեսանյութերի համար, որոնք ցուցադրվել են "Արմենիա" հեռուստաընկերությամբ:

"Տպագիր և առցանց լրատվամիջոցներ" անվանակարգում երկրորդ տեղն է զբաղեցրել լրագրող Վահան Իշխանյանը՝ "Հայաստան. ստրկությունը 21-րդ դարում կամ թրաֆիքինգ" հրապարակման համար, երրորդ մրցանակային տեղին արժանացել է "Երկիր" պարբերականի լրագրող Աստղիկ Կարապետյանը՝ "Ուզում եմ թրաֆիքինգի զոհ դառնալ" նյութի համար: Մասնագիտական ժյուրին այս անվանակարգում առաջին տեղ չէր շնորհել:

Մրցանակային տեղերի համար սահմանված է նաև դրամական պարգև:

Ժյուրիին, որի կազմում ընդգրկված էին լրագրողական չորս կազմակերպությունների ներկայացուցիչներ և թրաֆիքինգի հարցերով երեք փորձագետներ, ներկայացվել էր շուրջ 40 աշխատանք: Նախորդ տարի, երբ մրցանակաբաշխությունն անցկացվում էր առաջին անգամ, ներկայացվել էին միայն մեկ տասնյակ աշխատանքներ, ինչը վկայում է լրագրողական շրջանում թեմայի վերաբերյալ հետաքրքրության աճի մասին:

2013 թ. դեկտեմբերի 19-ին ՀՀ ԱԳՆ նախաձեռնությամբ և ԵԽ աջակցությամբ կայացավ կլոր սեղան, որը հրավիրվել էր քննարկելու «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի» ԵԽ կոնվենցիայի դրույթների Հայաստանի կողմից կատարման ընթացքը՝ ԵԽ Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի փորձագիտական խմբի (ԳՐԵՏԱ-ի) և Կողմերի կոմիտեի կողմից արված առաջարկների լույսի ներքո: Հանդիպումը վարում էր ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության պետ, Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի ղեկավար Վահրամ Կաժոյանը: Հանդիպման ընթացքում մասնավորապես քննարկվեցին մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարին ուղղությամբ ՀՀ-ում իրականացվող աշխատանքները 4 հարթությունների ներքո, որոնք են՝ կանխարգելում, զոհերի իրավունքների պաշտպանություն ու աջակցություն, հանցագործների հետապնդում և համագործակցություն: Քննարկվեցին նաև «Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքի և Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց համար փոխհատուցման տրամադրման կարգի նախագծերը:

Հանդիպման ավարտին մասնակիցներն առաջարկություններ ներկայացրեցին Հայաստան-ԳՐԵՏԱ համագործակցության հետագա ծավալման վերաբերյալ:

### **ՀՀ արտաքին գործերի նախարարություն**

ՀՀ արտաքին գործերի նախարարությունն (ԱԳՆ), ի դեմս ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության պետ Վահրամ Կաժոյանի, 2013 թ.-ին իրականացրել է Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի (այսուհետ՝ ԹԱԽ) աշխատանքների ղեկավարումը: 2013 թ. փետրվարի 28-ին ՀՀ կառավարությունը հաստատեց Հայաստանի Հանրապետությունում 2013-2015 թվականների ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը, որը մշակվել էր ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդին կից

աշխատանքային խմբի կողմից և ներառում է նախորդ ծրագրի հիմնական ուղղությունները, միևնույն ժամանակ նախատեսված միջոցառումներով և նպատակներով ավելի զոհակենտրոն է:

ՀՀ ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության մարդու իրավունքների բաժնի կողմից նախապատրաստվել են ԹԱԽ-ի 2013 թ. կիսամյակային և տարեկան հաշվետվությունները՝ Հայաստանում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի ուղղությամբ տարված աշխատանքների վերաբերյալ:

2013 թվականի հունիսի 20-ին ԱՄՆ Պետքարտուղարությունը հրապարակեց մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վերաբերյալ 2012 թվականի տարեկան զեկույցը, որում անդրադարձ է արվում աշխարհի տարբեր երկրներում ստեղծված իրավիճակին և այս հանցագործության նկատմամբ համապատասխան արձագանքին: Վերոհիշյալից ելնելով երկրները դասվում են տարբեր խմբերի:

Զեկույցի համաձայն, Հայաստանն առաջին անգամ դասվեց 1-ին խմբում:

Զեկույցում մասնավորապես ասվում է. «Հայաստանի կառավարության կողմից ձեռնարկված քայլերը ամբողջությամբ համապատասխանում են թրաֆիքինգի վերացման նվազագույն չափանիշներին: 2012 թվականին կատարելագործվել են իրավապահ մարմինների, ինչպես նաև պաշտպանությանն ուղղված աշխատանքները, Հայաստանի պաշտոնյաները ամուր գործընկերային հարաբերություններ են ունեցել քաղաքացիական հասարակության հետ, շարունակվել են ուսուցումները հարյուրավոր պետական աշխատողների համար, ՀՀ կառավարությունը շարունակել է ներդրումներ կատարել թրաֆիքինգի զոհերի կացարանի համար և ձեռնարկել է մեծ ջանքեր թրաֆիքինգի կանխարգելման ուղղությամբ»:

Զեկույցում ներկայացված են նաև որոշ առաջարկներ՝ թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտը էլ ավելի կատարելագործելու վերաբերյալ:

ՀՀ արտաքին գործերի նախարարության նախաձեռնությամբ և ի կատարումն չորրորդ ազգային ծրագրի դյուֆների՝ շարունակվել են աշխատանքները մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարում համագործակցության և մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց աջակցության տրամադրման նպատակով համաձայնագրերի ստորագրման ուղղությամբ: 2013 թ. ապրիլի 19-ին ստորագրվեց «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագիրը:

2013 թ. մայիսի 13-14-ին ՀՀ ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության պետ Վահրամ Կաժոյանը, ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար, Հայաստանում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդի նախագահ Արմեն Գևորգյանի գլխավորած պատվիրակության կազմում մասնակցեց Նյու Յորքում կայացած ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բարձր մակարդակի հանդիպման նիստին, որի նպատակն էր գնահատել 2010 թ.-ին ընդունված Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի ՄԱԿ-ի գլոբալ գործողությունների ծրագրի իրականացման առաջընթացը:

2013 թ. մայիսի 21-22-ը Վարշավայում՝ «Միգրացիայի և ապաստանի հարցերով արևելյան գործընկերություն» հարթակի շրջանակներում կայացավ փորձագիտական սեմինար նվիրված մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի հիմնախնդիրներին: Հայաստանի Հանրապետությունը հանդես է եկել որպես այս միջոցառման նախաձեռնողներից մեկը և համակազմակերպիչ: Աշխատանքային խմբերում կայացած քննարկումների ժամանակ ելույթներով հանդես է եկել դեսպան Կաժոյանը:

2013 թ. հունիսի 12-ին «Հայելի» մամուլի ակումբում տեղի ունեցավ մամուլի ասուլիս, որը վերաբերում էր ԱՄՆ պետքարտուղարության 2013 թ.-ի զեկույցին, որում Հայաստանը տեղակայվել էր 1-ին խմբի երկրների շարքում: Ասուլիսին բացի ՀՀ ԱԳՆ միջազգային

կազմակերպությունների վարչության պետ, ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի ղեկավար Վահրամ Կաժոյանից, մասնակցեցին ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության երրորդ վարչության պետ Տիգրան Պետրոսյանը, «Մարդը կարիքի մեջ» (People in Need) հասարակական կազմակերպության թրաֆիքինգի և միգրացիոն ծրագրերի ղեկավար Տաթևիկ Բեժանյանը և «Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ Արզուման Հարությունյանը:

ՀՀ ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության պետ, ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի ղեկավար Վահրամ Կաժոյանը ս.թ. հունիսի 13-ին մասնակցել է նաև Արմնյուզ հեռուստատալիքի «Բանաձև» հաղորդմանը, որը նույնպես նվիրված էր ԱՄՆ պետքարտուղարության 2013 թ. զեկույցին և Հայաստանում իրականացվող հակաթրաֆիքինգային նախաձեռնություններին: Հաղորդման գովազդային հատվածներում ցուցադրվել են թրաֆիքինգի կանխարգելման թեմայով սոցիալական հոլովակներ:

2013 թ. հունիսի 6-ին ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի նիստերի դահլիճում կայացավ ամենամյա մրցանակաբաշխություն՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) երևույթի և դրա դեմ պայքարի վերաբերյալ լավագույն լրագրողական լուսաբանման համար: Միջոցառմանը ներկա էին ՀՀ փոխվարչապետ, ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդի նախագահ Արմեն Գևորգյանը, Արտաքին գործերի նախարարի տեղակալ Աշոտ Հովակիմյանը, ՀՀ ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության պետ, ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի ղեկավար Վահրամ Կաժոյանը, աշխատանքային խմբի անդամները, միջազգային և հասարակական կազմակերպությունների, Հայաստանում ԱՄՆ դեսպանատան ներկայացուցիչներ: Մրցույթը հայտարարվել էր ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդի կողմից՝ խրախուսելու համար այն լրագրողներին և հեղինակներին, ովքեր իրենց աշխատանքներում անդրադառնում են այդ երևույթին, հանրությանը տեղեկացնում դրա բացասական ազդեցությունների մասին, մատնացույց անում ելքերը:

Ս.թ. հունիսի 25-ից 26-ը ՀՀ ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության պետ, ԹԱԽ ղեկավար Վահրամ Կաժոյանը և մարդու իրավունքների բաժնի աշխատակից, ԹԱԽ ներկայացուցիչ Օլգա Դավթյանը մասնակցել են Վիեննայում կայացած թրաֆիքինգի դեմ պայքարի դաշինքի ազգային համակարգողների 13-րդ համաժողովի աշխատանքներին: Համաժողովի ընթացքում պատվիրակության ղեկավար Վ. Կաժոյանը հանդես եկավ ելույթով՝ ներկայացնելով ՀՀ իշխանությունների կողմից թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում իրականացվող քայլերը: Մասնավորապես շեշտվեց, որ ՀՀ իշխանությունները խիստ կարևորում են թրաֆիքինգի հանցագործությունից տուժած զոհերի իրավունքների լիակատար պաշտպանությունը և նրանց առանց նախապայմանների հնարավորինս լայն օժանդակության տրամադրումը: Այդ իսկ պատճառով Հայաստանում իրականացվող բոլոր նախաձեռնությունները կրում են զոհակենտրոն բնույթ:

Համաժողովի շրջանակներում ՀՀ պատվիրակությունը հանդիպում ունեցավ նաև Եվրոպայի խորհրդի Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին կոնվենցիայի գործադիր քարտուղար Պետյա Նեստրովայի հետ: Հանդիպման ընթացքում Վ. Կաժոյանը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության կողմից մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի կիրառման վերաբերյալ ԵԽ փորձագիտական խմբի (ԳՐԵՏԱ) առաջին զեկույցում ներառված առաջարկների ուղղությամբ իրականացվելիք և նախատեսվող գործողությունները: Պայմանավորվածություն ձեռք բերվեց նոր օրենքի

նախագծի, փոխհատուցման մեխանիզմների եւ ուղղորդման կարգի հետ մի շարք՝ տարածաշրջանային (Վարշավա) և տեղական (Երևան) միջոցառումների անցկացման վերաբերյալ:

2013 թ. սեպտեմբերի 17-ին Ստրասբուրգում ՀՀ ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության պետ Վահրամ Կաթոյանը հանդիպում է ունեցել ԵԽ փորձագիտական խմբի (ԳՐԵՏԱ)-ի համակարգողների հետ, որի ընթացքում հաշվետվություն-զեկույց ներկայացրեց վերջին 3 տարիների ընթացքում ՀՀ իշխանությունների կողմից թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում իրականացված քայլերը: Նույն օրը Վ. Կաթոյանը հանդիպում ունեցավ նաև Եվրոպայի խորհրդի Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին կոնվենցիայի գործադիր քարտուղար Պետյա Նեստրովայի հետ: Ձեռք բերվեց պայմանավորվածություն ս.թ. դեկտեմբերին Երևանում կազմակերպել համաժողով ԳՐԵՏԱ-ի փորձագետների մասնակցությամբ՝ իրականացված և նախատեսվող նախաձեռնությունների գնահատման և, անհրաժեշտության դեպքում, փորձագիտական խորհրդատվություն/եզրակացություն ստանալու նպատակով:

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից իրականացվող «Գործողությունների ազգային ծրագրի իրականացման գործում Հայաստանի հակաթրաֆիքինգային ազգային դերակատարների կարողությունների ուժեղացում» ծրագրի օժանդակությամբ մշակվել է «Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հյուպատոսական ծառայության աշխատակիցների համար «Մարդու շահագործումը (թրաֆիքինգը) և դրա դեմ պայքարը» ձեռնարկի նախագիծը: Բացի այդ, ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն ՀՀ ԱԳՆ աշխատակիցների, մասնավորապես նորանշանակ հյուպատոսների համար 2013թ. նոյեմբերի 29-ին վերապատրաստման դասընթացներ են անցկացվել:

2013 թ. նոյեմբերի 26-27-ը Վարշավայում ՀՀ ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության պետ Վահրամ Կաթոյանը մասնակցել է “Չոհերո առաջնային են՝ թրաֆիքինգի զոհերի պաշտպանություն և առակցություն” համաժողովին, որի նախաձեռնողներից մեկը Հայաստանն էր և որի նպատակ էր մասնակից երկրների միջև թրաֆիքինգի դեմ պայքարում փորձի փոխանակումը, ինչպես նաև զոհերի պաշտպանությանն ուղղված պարտավորությունների պարզաբանումների ներկայացումը:

2013 թ. դեկտեմբերի 4-ից 6-ը ՀՀ ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության պետ Վահրամ Կաթոյանը, որպես ԹԱԽ ղեկավար և մարդու իրավունքների բաժնի աշխատակից Լ. Հակոբյանը մասնակցել են Թբիլիսիում տեղի ունեցած Միգրացիայի միջազգային կազմակերպության Հայաստանյան առաքելության կողմից կազմակերպված «Թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկման ամրապնդումը կրթության միջոցով Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում» տարածաշրջանային կոնֆերանսին, որի նպատակն էր ծրագրի արդյունքների և ձեռքբերումների ներկայացումը, ինչպես նաև հետագա գործողությունների քննարկումը:

2013 թ. դեկտեմբերի 19-ին ՀՀ ԱԳՆ նախաձեռնությամբ և ԵԽ աջակցությամբ կայացավ կլոր սեղան, որը հրավիրվել էր քննարկելու «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի» ԵԽ կոնվենցիայի դրույթների Հայաստանի կողմից կատարման ընթացքը՝ ԵԽ Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի փորձագիտական խմբի (ԳՐԵՏԱ-ի) և Կողմերի կոմիտեի կողմից արված առաջարկների լույսի ներքո: Հանդիպումը վարեց ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության պետ, Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի ղեկավար Վահրամ Կաթոյանը: Հանդիպման ընթացքում մասնավորապես քննարկվեց մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարին ուղղությամբ ՀՀ-ում իրականացվող աշխատանքները 4 հարթությունների ներքո, որոնք են՝ կանխարգելում, զոհերի իրավունքների պաշտպանություն ու աջակցություն, հանցագործների

հետապնդում և համագործակցություն: Քննարկվեցին նաև «Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» օրենքի և Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց համար փոխհատուցման տրամադրման կարգի նախագծերը: Հանդիպման ավարտին մասնակիցները առաջարկություններ ներկայացրեցին Հայաստան-ԳՐԵՏԱ համագործակցության հետագա ծավալման վերաբերյալ:

N	Միջոցառումները	Տեղեկատվություն իրականացված միջոցառման/ների վերաբերյալ (այդ թվում՝ ըստ գնահատման ցուցիչների)	Այլ նշումներ
1.	<p>Իրականացնել Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) երևույթի հետ կապված գործող օրենսդրական դաշտի շարունակական վերլուծություն և անհրաժեշտության դեպքում ՀՀ կառավարությանը ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենքներում և այլ իրավական ակտերում լրացումներ և փոփոխություններ կատարելու կամ նոր իրավական ակտեր ընդունելու վերաբերյալ առաջարկություններ</p>	<p><b><u>ՀՀ ոստիկանություն</u></b>          Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման զոհերին ՀՀ-ում կացության կարգավիճակ տրամադրելու, ինչպես նաև նրանց վարչական իրավախախտումներ կատարելու համար պատասխանատվությունից ազատելու դրույթները ՀՀ օրենսդրությունում նախատեսելու նպատակով ՀՀ ոստիկանության կողմից մշակվել են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում» և «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու ՀՀ օրենքների նախագծերը, որոնք ներկայումս քննարկվում ՀՀ Նախագահի աշխատակազմում:</p> <p><b><u>ՀՀ ԱԳՆ</u></b>          «Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» օրենքի նախագիծն ուղարկվել է Եվրոպայի Խորհրդի ԳՐԵՏԱ փորձագիտական մարմնին և ԱՄՆ պետդեպարտամենտին՝ փորձաքննության:</p> <p><b><u>ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ</u></b>          Տրամադրվել են տեղեկություններ այլ երկրներում թրաֆիքինգի զոհերի փոխհատուցման ֆոնդի աշխատանքների կազմակերպման, ազգային ուղղորդման կարգի իրագործման, թրաֆիքինգի զոհերի աջակցության մասին օրենքների վերաբերյալ: Լրամշակվել է ՀՀ «Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» օրենքի նախագծի:</p> <p><b><u>ՀՀ տարածաքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն</u></b>          Մշակվել է միգրացիան կանոնակարգող ՀՀ օրենսդրությունը միջազգային չափանիշներին, այդ թվում՝ Եվրամիության մոտեցումներին և սկզբունքներին համապատասխանեցնելուն ուղղված եռամյա ծրագիր: Այն կազմված է 6 տարբեր բաժիններից և ընդգրկում է ավելի քան 90 գործողություն: Նախագծի վերաբերյալ շահագրգիռ պետական</p>	

		<p>մարմիններից ստացված կարծիքների հիման վրա, ինչպես նաև Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքին Հայաստանի անդամակցելու գործընթացով պայմանավորված լրամշակվել է և 2013թ. դեկտեմբերի 19-ին դրվել է շրջանառության մեջ:</p> <p>Ոչ լեգալ միգրացիայի կազմակերպումը որակվել է որպես քրեորեն պատժելի արարք, որի հետ կապված նոր հողված է ներմուծվել ՀՀ քրեական օրենսգրքում: Խնդիրը վերաբերում է տարածված այն դեպքերին, երբ շահույթ ստանալու նպատակով անձանց կամ հաստատությունների կողմից կազմակերպվում է մեր քաղաքացիների տեղափոխումը այլ երկրներ՝ խախտելով վերջիններիս միգրացիոն օրենսդրությունը:</p> <p>ՀՀ վարչական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագծով վարչական պատասխանատվություն է սահմանվում այն գործատուների նկատմամբ, ում մոտ առկա է օտարերկրացիների զբաղվածություն՝ առանց օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման :</p> <p>Վերոգրյալ երկու նախագծերը ներկայացված են ՀՀ Ազգային ժողով:</p> <p><b><u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</u></b></p> <p>«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագծում թրաֆիքինգի գոհերը ընդգրկվել են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց խմբերի ցանկում:</p>	<p>Նախագիծը գտնվում է ՀՀ Ազգային ժողովում:</p>
2.	<p>Վերանայել ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 20-ի N 1385-Ա որոշմամբ հաստատված մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը</p>	<p><b><u>ՀՀ ոստիկանություն</u></b></p> <p>Ի կատարումն ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Ա.Գևորգյանի 22.06.2013թ. թիվ 01/14/47203-13 հանձնարարականի ՀՀ ոստիկանության կողմից մշակվել է «Թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը ներկայումս քննարկվում է ՀՀ Նախագահի աշխատակազմում:</p> <p><b><u>ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ</u></b></p> <p>ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից իրականացվող «Գործողությունների ազգային ծրագրի իրականացման գործում Հայաստանի հակաթրաֆիքինգային ազգային դերակատարների կարողությունների ուժեղացում» ծրագրի օժանդակությամբ ուսումնասիրվել են մի շարք</p>	<p>Ծրագիրը ֆինանսավորվում է ԱՄՆ պետքարտուղարության կողմից</p>



		<p>երկրների փորձը՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգի արդյունավետ իրականացման, ինչպես նաև փոխհատուցման համակարգի ստեղծման և գործարկման վերաբերյալ:</p> <p><b><u>ՀՀ արդարադատության նախարարություն</u></b></p> <p>2013թ. նոյեմբերին «Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» օրենքի նախագծի առնչությամբ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական փորձագիտական եզրակացությունը ներկայացվել է ՀՀ ԿԱ ոստիկանություն:</p> <p>Մշակվել են նաև «Օտարերկրացիների մասին» և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենքներում լրացումներ կատարելու մասին նախագծերը:</p> <p><b><u>ՀՀ արտաքին գործերի նախարարություն</u></b></p> <p>«Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» օրենքի նախագծի անգլերեն տարբերակը 2014թ. հունվարին փոխանցվել է ԳՐԵՏԱ-յի գործադիր քարտուղարություն և ԱՄՆ պետական դեպարտամենտ՝ հնարավոր մեկնաբանություններ և կարծիքներ ստանալու համար:</p>	
3.	<p>Շարունակել աշխատանքները մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարում համագործակցության և մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց աջակցության տրամադրման նպատակով համաձայնագրերի ստորագրման ուղղությամբ՝ այդ թվում վերջնակետ երկրների հետ</p>	<p><b><u>ՀՀ արտաքին գործերի նախարարություն</u></b></p> <p>2013 թ. ապրիլի 19-ին ստորագրվեց «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագիրը:</p>	
4.	<p>ա/ Հայաստանի Հանրապետության համար աշխատանքային միգրացիայի տեսանկյունից առավել հետաքրքրություն ներկայացնող պետությունների ցանկի</p>	<p><b><u>ՀՀ տարածաքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն</u></b></p> <p>Կազմվել է ՀՀ-ի համար աշխատանքային միգրացիայի տեսանկյունից առավել հետաքրքրություն ներկայացնող պետությունների ցանկը:</p>	<p>Սույն կետով նախատեսված բոլոր միջոցառումները համապատասխանում</p>

<p>ծնավորում բ/ Միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա ՀՀ դիվանագիական ներկայացուցիչությունների միջոցով համապատասխան երկրների աշխատաշուկաների ուսումնասիրության մեխանիզմների մշակում գ/ Աշխատուժի փոխանակման շուրջ միջպետական պայմանագրերի կնքման միջազգային փորձի ուսումնասիրություն</p>	<p>Մշակվել է դիվանագիտական ներկայացուցչությունների միջոցով աշխատանքային միգրացիայի տեսանկյունից երկրի համար առավել հետաքրքրություն ներկայացնող նստավայր պետությունների աշխատաշուկաների ուսումնասիրության միջազգային փորձի ուսումնասիրության վերաբերյալ զեկույց: Իրականացվել է համապատասխան երկրների աշխատաշուկաների ուսումնասիրություն, մշակվել են մեխանիզմներ, որի հիման վրա կազմվել է զեկույց: Մշակվել է աշխատուժի փոխանակման շուրջ միջպետական պայմանագրերի կնքման միջազգային փորձի հետազոտության վերաբերյալ զեկույց: <b><u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</u></b> Ձևավորվել է ՀՀ-ի համար աշխատանքային միգրացիայի տեսանկյունից առավել հետաքրքրություն ներկայացնող պետությունների ցանկը և ներկայացվել կլոր սեղանի քննարկմանը՝ շահագրգիռ պետական կառավարման մարմինների, ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ: Ուսումնասիրվել է միջազգային փորձը և դրա հիման վրա մշակվել են համապատասխան երկրների աշխատաշուկաների ուսումնասիրության մեխանիզմներ: Կազմվել է զեկույց, որը քննարկվել է կլոր սեղանի ընթացքում՝ շահագրգիռ պետական կառավարման մարմինների, ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ: Ուսումնասիրվել է աշխատուժի փոխանակման շուրջ միջպետական պայմանագրերի կնքման միջազգային փորձը, որի հիման վրա կազմվել է «Աշխատուժի փոխանակման շուրջ միջպետական պայմանագրերի կնքման արդի միջազգային զարգացումների Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող քաղաքականության վերաբերյալ» զեկույցը, որը քննարկվել է կլոր սեղանի ընթացքում՝ շահագրգիռ պետական կառավարման մարմինների, ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ:</p>	<p>են ՀՀ կառավարության 2011թ. նոյեմբերի 10-ի N1593-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ միգրացիայի պետական կարգա- վորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012- 2016 թվականների գործողությունների ծրագրի» 5.3 կետին:</p>
<p>5. Շարունակել իրազեկման և տեղեկացվածության բարձրացման աշխատանքները մարդկանց</p>	<p><b><u>ՀՀ տարածաքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն</u></b> Իրականացվել է ՀՀ-ից աշխատանքային միգրացիայի մեկնողների</p>	

<p>շահագործման (թրաֆիքինգի) վտանգի վերաբերյալ հատկապես ռիսկային խմբերում (արտագնա աշխատանքի մեկնողներ, օտարերկրացիներ, փախստականներ, կանայք, երիտասարդություն (ներառյալ մանկատների շրջանավարտներ), գործազուրկներ, հաշմանդամություն ունեցող անձինք)</p>	<p>իրազեկվածության մասին ուսումնասիրություն, որի հիման վրա կազմվել է զեկույց:</p> <p><b><u>ՀՀ ոստիկանություն</u></b></p> <p>Հասարակության իրազեկումը բարձրացնելու նպատակով <a href="http://www.police.am">www.police.am</a> կայքէջում առանձին հղումով ստեղծված թրաֆիքինգին վերաբերող հավելվածում շարունակվել է թրաֆիքինգի վերաբերյալ համապատասխան նյութերի տեղադրումը:</p> <p>ԿՀԴՊ գլխավոր վարչությունում բացվել է թրաֆիքինգի հարցերով թեժ գիծ: Բացի այդ, անչափահասների շրջանում կանխարգելիչ դաստիարակչական աշխատանքներ իրականացնելու, ինչպես նաև անչափահասների նկատմամբ կատարվող բռնություններից նրանց զերծ պահելու նպատակով՝ ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների ուժերով, սպասարկվող վարչական տարածքներում գործող դպրոցներում կազմակերպվել և անց են կացվել հանդիպումներ, զրույցներ, որոնց ընթացքում անդրադարձ է կատարվել անչափահասների շահագործման (թրաֆիքինգի) խնդիրներին:</p> <p><b><u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</u></b></p> <p>Իրականացվել է ՀՀ-ից աշխատանքային միգրացիայի մեկնողների իրազեկվածության մասին ուսումնասիրություն, որի հիման վրա կազմվել է զեկույց և քննարկվել կլոր սեղանի ընթացքում:</p> <p><b><u>ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ</u></b></p> <p>Բռնության ենթարկված կանանց, մանկատան շրջանավարտների, ինչպես նաև ուսանողների հետ իրականացվել են հանդիպումներ, որտեղ մարդու իրավունքների մասին տեղեկատվությունից բացի, տեղեկատվություն է տրամադրվել նաև թրաֆիքինգի երևույթի, դրա վտանգավորության, նման իրավիճակներում հայտնվելիս պաշտպանության միջոցների, պետության կողմից տրամադրվող աջակցության, ինչպես նաև երևույթի կանխարգելման վերաբերյալ:</p> <p><b><u>Հայաստանի գործատուների հանրապետական միություն</u></b></p> <p>Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի ուսանողների համար 2013 թվականի մարտի 13-ին անց է կացրել «Թրաֆիկինգ. հարկադիր աշխատանք» թեմայով դասընթաց: 2013թ. հոկտեմբերի 2-ին</p>	
--	---	--

		<p>կազմակերպվեց «Աշխատանքային միգրացիաի և վիզաների դյուրացում» թեմայով կոնֆերանս: Կոնֆերանսին մասնակցեցին Սանկտ-Պետրբուրգի տնտեսագիտական համալսարանի պրոֆեսորները:</p> <p>Ս. թ. դեկտեմբերի 27-ին Հայաստանի գործատուների հանրապետական միության կողմից հարկադիր աշխատանքի, թրաֆիկինգի, միգրացիայի վերաբերյալ ՀՀ Սփյուռքի նախարարությանը տրամադրվել են հետևյալ գրքերը՝</p> <p>1.Պայքար հարկադիր աշխատանքի դեմ (Ձեռնարկ գործատուների համար իր սկավառակով) — 40 հատ:</p> <p>2.Աշխատանքային միգրացիայի հարցերով ԱՄԿ բազմակողմանի հիմքերը —10 հատ:</p> <p>3.Միգրանտների կողմից ուղարկվող դրամական փոխանցումները —10 հատ:</p> <p><b>ԱՄՔՈՐ ՀԿ Հայաստանյան մասնաճյուղ</b></p> <p>ԱՄՔՈՐ-ը տեղադրել է թրաֆիքինգի կանխարգելմանը ուղղված թեմայով և թեժ գծի հեռախոսահամարով հայտարարություններ «Գինդ», «Եթեր», «TV Մոլ», «TV Ալիք» թերթերում, ինչպես նաև վազող տողով՝ «Շանթ»-ի արբանյակային հեռուստաալիքով:</p> <p>2013թ. դեկտեմբեր ամսից թեժ գծի հեռախոսահամարով և հարկադիր աշխատանքի և թրաֆիքինգի վերաբերյալ տեղեկատվությամբ պաստառներ են փակցվել մետրոպոլիտենի գնացքների 30 վագոններում, ինչպես նաև թեժ գծի հեռախոսահամարով հայտարարություններ են տեղադրվել Կենտրոն վարչական տարածքում՝ թվով 86 շենքերի 215 վերելակներում, Էրեբունի՝ թվով 80 շենքերի 185 վերելակներում և Շենգավիթ՝ թվով 80 շենքերի 203 վերելակներում: Հաշվետու ժամանակահատվածում տպագրվել են 2000 հատ տեղեկատվական բուկլետներ և 500 հատ տեղեկատվական պաստառներ:</p> <p>17 գյուղերում /2 Լոռիում, 4 Տավուշում, 6 Արագածոտնում, 2 Արարատում, 3 Արմավիրում/ անցկացվել են տեղեկատվական սեմինարներ հարկադիր աշխատանքի և թրաֆիքինգի կանխարգելման և ռիսկերի նվազեցման վերաբերյալ համայնքի ներկայացուցիչների համար: Ընդհանուր առմամբ մասնակցել են 363 հոգի՝ արտագնա աշխատանքի մեկնողներ, գյուղերի</p>	
--	--	---	--

		<p>գյուղապետարանի աշխատակիցներ, դպրոցի դասատուներ, բարձր դասարանների աշակերտներ և բուժանձնակազմ:</p> <p><b>Հույս և Օգնություն ՀԿ</b></p> <p>Կատարվել է հետազոտություն՝ «Մարդկանց թրաֆիքինգի ռիսկի գնահատում կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանանց միջավայրում»:</p> <p>Տպագրվել և սեռական ծառայություններ մատուցող կանանց միջավայրից կամավորների միջոցով տարածվել է հատուկ հուշաթերթ թրաֆիքինգի վտանգի և կանխարգելման վերաբերյալ: Ընդամենը՝ 2500 հուշաթերթ, որոնք տարածվել է Երևանում, Վանաձորում և Գյումրիում: 20 կամավորներ նախապես վերապատրաստվել են սեմինարի ժամանակ:</p> <p>Տպագրվել է նաև հուշաթերթ՝ «Զգուշացիր թրաֆիքինգից», (6 լեզվով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, պարսկերեն, վրացերեն և թուրքերեն), որը տարածվում է զբոսաշրջիկների, օտարերկրացի ուսանողների, բեռնատարների վարորդների միջավայրում: Ընդամենը՝ 5000 հատ:</p> <p><b>Հայկական Կարիտաս ԲՀԿ</b></p> <p>Տպագրվել են 1000 օրինակ թռուցիկ-օրացույցներ, 500 օրինակ ինքնակաչուն թերթիկներ, որոնք ներառում են տեղեկատվություն միգրացիայի և թրաֆիքինգի հարցերով անվճար իրավախորհրդատվություն տրամադրող 8212 թեժ գծի մասին:</p> <p>Երևանի մետրոպոլիտեն փակցվել են նաև պաստառներ, որոնք ներառում են տեղեկատվություն թրաֆիքինգի և միգրացիայի հարցերով 8212 թեժ գիծ ծառայության վերաբերյալ:</p> <p>Գյումրիում գործող թվով 15 ավիատոմսերի վաճառքի և ճամփորդական գործակալությունների ղեկավարների հետ կազմակերպվել են հանդիպումներ թրաֆիքինգի թեմայով և այդ գործակալություններում տարածվել են օրացույցներ միգրացիայի և թրաֆիքինգի 8212 թեժ գիծ ծառայության և տրամադրվող անվճար իրավախորհրդատվության վերաբերյալ:</p> <p>Տպագրվել է միգրացիայի, է թրաֆիքինգի ինչպես նաև հարկադիր աշխատանքի թեմաներով տեղեկատվական գրքույկներ (հուրաքանչյուր թեմայով՝ 300 օրինակից): Գրքույկում ներկայացված է թրաֆիքինգի</p>	
--	--	---	--

	<p>երևույթի բացատրությունը, ինչպես նաև նշված են Հայաստանում առկա բոլոր թեժ գիծ ծառայությունների հեռախոսահամարները, որոնք տրամադրում են անվճար իրավախորհրդատվություն թրաֆիքինգի հարցերով:</p> <p>Երեխաների շահագործման դեմ պայքարի օրվան նվիրված հունիսի 12-ին Երևանի սիրահարների այգում կազմակերպվել է բացօթյա միջոցառում, որի նպատակն էր հանրությանը իրազեկել երեխաների թրաֆիքինգի վերաբերյալ:</p> <p>Տպագրվել է նաև «Նայիր, խորհիր, գործիր, քո տված փողը նպաստում է երեխաների շահագործմանը» խորագրով տեղեկատվական թերթոն, նվիրված հունիսի 12-ին նշվող երեխաների շահագործման դեմ պայքարի միջազգային օրվան:</p> <p>Շիրակի մարզի Մարմաշեն գյուղում կազմակերպվել է սեմինար- քննարկում թրաֆիքինգի և անօրինական միգրացիայի վտանգների վերաբերյալ: Մասնակիցների մոտավոր տարիքը 18- 60:</p> <p>Շիրակի մարզի Բասեն գյուղի 30 տղամարդ բնակիչների հետ գյուղապետարանում կազմակերպվել է սեմինար քննարկում թրաֆիքինգի և անօրինական միգրացիայի վտանգների վերաբերյալ:</p> <p>2013թ. մայիսի 8-ին Փ. Թերլեմեզյանի անվան արվեստի պետական քոլեջում կազմակերպվել է թրաֆիքինգի թեմայով արվեստի աշխատաքների մրցույթ, քոլեջի բոլոր բաժինների ուսանողների շրջանում: Մրցույթին ներկայացվել են 45 աշխատաքներ, որոնցից լավագույն վեց աշխատանքների համար տրվեցին մրցանակներ: Մրցույթի նպատակն էր արվեստի ստեղծագործությունների միջոցով երիտասարդությանը և հանրությանը իրազեկել թրաֆիքինգի արատավոր երևույթի և վտանգների վերաբերյալ:</p> <p>Ժյուրիի նախագահն էր ՀՀ ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության պետ, ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի ղեկավար Վահրամ Կաժոյանը: Միջացառման վերաբերյալ «Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա» ՀԿ-ն ատրաստել է տեսանյութ, որը տեղադրվել</p>	<p><a href="http://www.antitrafficking.am/?laid=2&amp;laid=2&amp;com=module&amp;module=static&amp;id=107">http://www.antitrafficking.am/?laid=2&amp;laid=2&amp;com=module&amp;module=static&amp;id=107</a></p> <p>Կենտրոնները բացվել են ԵՄ կողմից ֆինանսավորվող «Աջակցություն շրջանառու միգրացիային և վերաինտեգրմանը Հայաստանում» ծրագրի</p>
--	---	--

	<p><a href="http://www.antitrafficking.am">www.antitrafficking.am</a> կայքէջում:</p> <p><b>«Մարդը կարիքի մեջ» չեխական ՀԿ հայաստանյան ներկայացուցչություն</b></p> <p>ԱՍՀՆ-ի հետ 2013թ.-ին ստորագրված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում ՀՀ 4 մարզերում՝ Արարատ, Արմավիր, Վայոց Ձոր, Սյունիք բացվել են միգրացիոն տեղեկատվական ռեսուրս կենտրոններ, որոնց նպատակն է իրազեկել արտագնա աշխատանքի մեկնող ՀՀ քաղաքացիներին թե նպատակակետ երկրներում ինչ խնդիրների կարող են հանդիպել (այդ թվում թրաֆիքինգի) և ում դիմել խնդրի առկայության դեպքում: Խորհրդատվություն է տրվել 233 արտագնա աշխատանքի մեկնողների: Ռեսուրս կենտրոնները նաև ցուցաբերում են աջակցություն ՀՀ վերադարձած աշխատանքային միգրանտերին՝ վերաինտեգրման ուղղությամբ:</p> <p><b>Դեմոկրատիան Այսօր ՀԿ</b></p> <p>Գյուղական համայնքներում թրաֆիքինգի կանխարգելման նպատակով «Դեմոկրատիան այսօր» ՀԿ-ն շարունակում է իրականացնել «Գյուղի կանանց նոր սերնդի առաջնորդներ» ծրագիրը: 10 գյուղական համայնքների երիտասարդ կանանց համար կազմակերպվել են իրազեկման սեմինարներ: Ծրագրի շրջանակներում տարբեր շրջաններից ընտրված 20 երիտասարդ կանանց համար կազմակերպվել են սեմինարներ և դասընթացներ ուղղված ոչ միայն իրազեկման բարձրացմանը, այլև ձեռք բերված գիտելիքների և հմտությունների շնորհիվ իրենց համայնքներում կանանց դերի բարձրացմանը, նրանց ավելի ակտիվ մասնակցությանը հասարակական կյանքում՝ ապահովելով գիտակցված որոշումներ կայացնելու և իրենց կյանքը կառավարելու հնարավորություն:</p> <p>«Դեմոկրատիան այսօր» ՀԿ-ն շարունակում է նաև իրականացնել խոցելի խմբերի համար «Ապահով ապագա երիտասարդների համար» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում ընտրված մասնկատան սաներ-շրջանավարտները և գյուղական համայնքների երիտասարդները մասնակցում են բազմաթիվ դասընթացների, որտեղ ստանում են գիտելիքներ և հմտություններ նկարչության, բատիկի, կար ու ձևի, զարդերի պատրաստման ոլորտներում, ինչպես նաև ծանոթանում ենն փոքր բիզնեսի կազմակերպման և առողջ ու</p>	<p>շրջանակներում (2013-2015)</p>
--	---	--------------------------------------

		<p>անվտանգ ապրելակերպի սկզբունքների հետ, ինչը հետագայում հնարավորություն կտա նրանց ավելի վստահ և ապահով ինքնուրույն կյանք կազմակերպել: Մասնակիցների թիվը՝ 15 հոգի:  <i>տես նաև սույն հաշվետվության թ. 8, 22, 24 և 29 կետերը:</i></p>	
6.	<p>ՀՀ սահմանային անցակետերում շարունակել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) մասին տեղեկատվական նյութերի տրամադրումը</p>	<p><b><u>ՀՀ կառավարությանն առնչվող ազգային անվտանգության ծառայություն</u></b></p> <p>Միգրացիայի միջազգային կազմակերպության հայաստանյան գրասենյակի կողմից իրականացվող «Միգրանտների իրավունքներն աշխատանքում» ծրագրի շրջանակներում 2012թ. հուլիսից ստեղծվել է տեղեկատվական գիծ՝ Լեհաստան և այլ ԵՄ երկրներ մեկնող ՀՀ քաղաքացիների իրավունքների, ինչպես նաև ԵՄ երկրներից վերադարձող ՀՀ քաղաքացիներին վերահսկողության աջակցության վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու նպատակով:</p> <p>«Աջակցություն Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում հետընդունման կառավարման արդյունավետ համակարգի ձևավորում» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում սահմանային վերահսկողության սահմանապահ ջոկատին /ՍՎԱԶ/ տրամադրվել է 1500 հատ ձեռնարկ «Ձեր ուղևորության անվտանգությունը» խորագրով:</p> <p>Պետական սահմանի անցման կետերում ՍԶ աշխատակիցների կողմից այդ ծրագրի շրջանակներում ՀՀ քաղաքացիներին տրամադրվել է տեղեկատվություն, այդ թվում ՀՀ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տարածքում գործող թեժ գծի վերաբերյալ:</p> <p>Բացի այդ, սահմանահատում իրականացրած քաղաքացիներին, մասնավորապես, Թուրքիայի Հանրապետություն և ԱՄԷ մեկնած քաղաքացիներին տրամադրվել են նախազգուշական պաստառներ, թերթոններ, բրոշյուրներ և ուղեցույցներ հնարավոր թրաֆիքինգի ենթարկվելու վտանգի վերաբերյալ:</p> <p>Տրամադրվել է արտերկրում անելանելի վիճակում գտնվելու դեպքում «Օգնության գիծ» գրքույկը, որտեղ նշված են օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսությունների հասցեներն ու հեռախոսահամարները:</p>	<p>Գրքույկը հրատարակվել է ՄՄԿ կողմից իրականացվող և</p>



		<p>Տրամադրվել է «Ճանապարհի դեպի ստրկություն» գրքույկը, որտեղ մանրամասն նկարագրվում է արտասահման ժամանակավոր բնակության կամ աշխատելու նպատակով մեկնող միգրանտներին տրվող առաջնային խորհուրդները:</p> <p><b>Միգրացիայի միջազգային կազմակերպություն</b></p> <p>ՄՄԿ կողմից իրականացվող և Շվեյցարիայի կառավարության կողմից ֆինանսավորվող «Թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկման ամրապնդումը կրթության միջոցով Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում» տարածաշրջանային ծրագիր /2012-2013թ.թ./ շրջանակներում տպագրվել է «Ձեր ուղևորության անվտանգությունը» խորագրով գրքույկի 1500 օրինակ ՀՀ սահմանային անցակետերում բաշխելու նպատակով:</p>	<p>Շվեյցարիայի կառավարության կողմից ֆինանսավորվող «Թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկման ամրապնդումը կրթության միջոցով Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում» տարածաշրջանային ծրագիր /2012-2013թ.թ./</p>
7.	<p>Ամբուլատոր պոլիկլինիկական հաստատություններում իրականացնել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգի մասին հասարակական կազմակերպությունների կողմից տրամադրված տեղեկատվական նյութերի տարածում</p>	<p><b>Միգրացիայի միջազգային կազմակերպություն</b></p> <p>ՀՀ առողջապահության նախարարությանը տրամադրվել է «Ձեր ուղևորության անվտանգությունը» խորագրով գրքույկի 1500 օրինակ ՀՀ բուժհաստատություններում բաշխելու նպատակով:</p> <p><b>ՀՀ առողջապահության նախարարություն</b></p> <p>Միգրացիայի միջազգային կազմակերպության կողմից տրամադրված «Ձեր ուղևորության անվտանգությունը» խորագրով գրքույկի 1500 օրինակը ՀՀ առողջապահության նախարարության կողմից բաշխվել է ՀՀ մարզերում և Երևանում տեղակայված ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների միջև:</p>	
8.	<p>Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վերաբերյալ երիտասարդության իրազեկության բարձրացման նպատակով կազմակերպել քննարկումներ, հանդիպումներ, դասընթացներ և այլն</p>	<p><b>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</b></p> <p>Հայաստանի 15 ոչ մեծ մարզային քաղաքներում իրականացվել է «Թրաֆիքինգի դեմ պայքարի իրազեկության բարձրացում երիտասարդների մասնակցությամբ դերային խաղերի միջոցով» ծրագիրը: Յուրաքանչյուր քաղաքում՝ 15 մասնակից (16-30 տարեկան երիտասարդներ): Սեմինարների ժամանակ փորձագետները տրամադրել են տեղեկատվություն թրաֆիքինգի մասին, իսկ դերային խաղերի</p>	

		<p>ժամանակ անցկացվել է մրցույթ, և ընտրել են պոտենցիալ «զոհին»: Որպես խաղի սցենար ծառայել են թրաֆիքինգին վերաբերվող իրական պատմությունները: Խաղի համար տրվել է սահմանափակ ժամանակ, որից հետո որոշվել է հաղթողը, և փորձագետների թիմերի մասնակցությամբ քննարկվել են յուրաքանչյուր կողմի գործողությունները:</p> <p>Ծրագրի տևողությունը 5 ամիս էր ( 2013 թ. մայիս-հոկտեմբեր):</p> <p><b>«Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա» ՀԿ</b></p> <p>Ս. թ. ապրիլի 25-ին Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի, սոցիոլոգիայի և հոգեբանության ֆակուլտետների ավելի քան 45 ուսանողի համար կազմակերպվել էր մեկ օրյա սեմինար՝ «Հանրության իրազեկման բարձրացման հարցում սոցիալական գովազդի դերը» թեմայով: Հանդիպման ընթացքում ուսանողները տեղեկացան, թե ինչպես պետք է կազմակերպել սոցիալական գովազդարշավ՝ ուղղված սոցիալական տարբեր խնդիրների, հատկապես թրաֆիքինգի դեմ պայքարին:</p> <p>Ս. թ. մայիսի 24-26-ը Երևանի մամուլի ակումբի և Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի կողմից Աղվերանում կազմակերպվել էր սեմինար՝ «Քաղաքացիական հասարակության ավանդական կազմակերպությունների և շահերի պաշտպանության ոչ ֆորմալ խմբերի համագործակցության խթանումը» թեմայով:</p> <p>Ս.թ. հուլիսի 7-ին Նորարական փորձարարական արվեստի կենտրոնում կայացած (ՆՓԱԿ) «Մեկ կադր» կարճ ֆիլմերի փառատոնի շրջանակներում «Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ Արզուման Հարությունյանը «Սոցիալական գովազդ» թեմայով վարպետության դաս ունեցավ ներկաների հետ: Հանդիպման ընթացքում Ա. Հարությունյանը ներկայացրեց իր հեղինակած սոցիալական գովազդները, այդ թվում նաև թրաֆիքինգին վերաբերող սոցիալական գովազդները, որոնց շուրջ ծավալվեցին քննարկումներ:</p> <p>«Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա» ՀԿ նախագահ Արզուման Հարությունյանը դասախոսելով - Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի գովազդի ֆակուլտետում պարբերաբար անդրադարձել է</p>	
--	--	--	--

		<p>թրաֆիքինգ երևոյթին, ուսանողների հետ մշակել սոցիալական հոլովակների սցենարներ, կազմակերպել է քննարկումներ համապատասխան փորձագետների հետ:</p> <p><b><u>Հայկական Կարիտաս ԲՀԿ</u></b></p> <p>Գյումրու «Փոքրիկ Իշխան» սոցիալական կենտրոնի 12-16 ամյա սաների համար կազմակերպվել է թրաֆիքինգի թեմայով դասընթաց: Մասնակիցների ընդհանուր թիվը՝ 25 հոգի:</p> <p>«Ուորլդ Վիժն» կազմակերպության «Թրաֆիքինգի և միգրացիայի կանխարգելում» ծրագրի հրավերով կազմակերպվել է թրաֆիքինգի թեմայով դասընթաց, թեմատիկ ֆիլմի դիտում և քննարկում թվով 21 երիտասարդների համար:</p> <p>«Զինիշյան» հիմնադրամի «Ապրիր երազանքդ» ծրագրի շահառու երիտասարդների համար կազմակերպվել է թրաֆիքինգի թեմայով սեմինար-քննարկում: Մասնակիցների քանակը՝ 21 երիտասարդ:</p> <p><b><u>Միգրացիայի միջազգային կազմակերպություն</u></b></p> <p>Կազմակերպվել են սեմինարներ և դասընթացներ «Թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկման ամրապնդումը կրթության միջոցով Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում» տարածաշրջանային ծրագրի շրջանակում ՄՄԿ փորձագետների, ՄԱԿ-ի հայկական ասոցիացիա և Հելսինկյան ասոցիացիա ՀԿ-երի կողմից:</p> <p>Հրատարակվել և ՀՀ բուհերին է բաշխվել «Մարդու թրաֆիքինգ և շահագործում» ուսումնաստանողական ձեռնարկի 4000 օրինակ</p> <p>Կազմակերպվել են դասընթացներ «Մարդու թրաֆիքինգ և շահագործում» ուսումնաստանողական ձեռնարկում ներառված թեմաներով Երևանի, Գավառի, Գյումրու բուհերի 550 ուսանողների համար</p> <p>Կազմակերպվել են սեմինարներ «Մարդու թրաֆիքինգ և շահագործում» թեմայով 8 համալսարանների և 3 ավագ դպրոցների 252 սովորողների համար Երևանում և Վանաձորում:</p> <p><i>դես նաև սույն հաշվետվության թ. 22 և 24 կետերը:</i></p>	
9.	ա/ Աջակցել աշխատաշուկայում երիտասարդների մրցունակության	<p><b><u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</u></b></p> <p>Տարվա ընթացքում խորհրդատվություն է ստացել 228500 աշխատանք</p>	

	<p>բարձրացմանը և մասնագիտական կողմնորոշմանը, տրամադրել խորհրդատվություն ու տեղեկատվություն կրթության և աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագիտությունների վերաբերյալ ք/ Մասնագիտություն ունեցող, սակայն աշխատանքային ստաժ չունեցող գործազուրկների և աշխատանք փնտրող չգրադված հաշմանդամների աշխատանքային պրակտիկայի կազմակերպումը գործատուի մոտ</p>	<p>փնտրող անձ, որից 41130 երիտասարդ:</p>	
<p>10.</p>	<p>Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների, համայնքային և եկեղեցական կառույցների միջոցով արտերկրում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների շրջանում իրականացնել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վերաբերյալ կանխարգելիչ միջոցառումներ՝ համապատասխան տեղեկատվական նյութերի տրամադրմամբ</p>	<p><b><u>ՀՀ սփյուռքի նախարարություն</u></b>  Շարունակվել է Սփյուռքի տարբեր կառույցներին, կազմակերպություններին մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգի վերաբերյալ տեղեկատվական նյութերի, թերթոնների տրամադրման գործընթացը:  2013թ.-ի ընթացքում ձեռք են բերվել մարդկանց շահագործման վերաբերյալ 7 անուն տեղեկատվական նյութեր, որոնցից մի մասը արդեն ուղարկվել, իսկ մյուս մասը կուղարկվի մոտ ժամանակներս ԱՊՀ, Միջին Արևելյան և եվրոպական երկրներում գործող սփյուռքահայ կառույցներին՝ մեր հայրենակիցներին թրաֆիքինգից զերծ պահելու նպատակով:  Ձեռք են բերվել հետևյալ նյութերը՝  Հայերեն լեզվով 500 օրինակ տեղեկատվական գրքույկ. «Ինչպես նվազեցնել թրաֆիքինգի (մարդկանց շահագործման) զոհ դառնալու վտանգը», հրատարակիչ «Հույս և օգնություն» հասարակական կազմակերպություն, 2013 թ.:  Հայերեն, անգլերեն, թուրքերեն, ռուսերեն, արաբերեն և վրացերեն լեզուներով պատրաստված 200 օրինակ տեղեկատվական գրքույկ. «Զուլաջիր թրաֆիքինգից», հրատարակիչ «Հույս և օգնություն» հասարակական կազմակերպություն, 2013 թ.:  Հայերեն լեզվով 50 օրինակ տեղեկատվական պաստառներ. «Եղիր իրազեկ», թեժ գծի հեռախոսահամարով, հրատարակիչ UMCOR 2013 թ.:</p>	

		<p>Հայերեն լեզվով 100 օրինակ թերթն «Եղեք իրազեկ. Իմացեք Ձեր իրավունքները», հրատարակիչ UMCOR 2013թ.:</p> <p><b>ՀՀ արտաքին գործերի նախարարություն</b></p> <p>ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից իրականացվող «Գործողությունների ազգային ծրագրի իրականացման գործում Հայաստանի հակաթրաֆիքինգային ազգային դերակատարների կարողությունների ուժեղացում» ծրագրի օժանդակությամբ պատրաստել է ՀՀ-ից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների համար թրաֆիքինգի կանխարգելման թերթն, որոնք տրամադրվելու են ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններին:</p>	
11.	<p>Միջոցառումներ իրականացնել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգի վերաբերյալ իրազեկման բարձրացման և դրա դեմ պայքարի մեխանիզմների ուղղությամբ բանակում և հատկապես խաղաղապահ ուժերում, մասնավորապես՝ ա/ խաղաղապահ առաքելություններին մասնակցող ՀՀ ՁՈՒ անձնակազմի շրջանում պարբերաբար անցկացնել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վերաբերյալ իրազեկվածության բարձրացման քննարկում-դասախոսություններ՝ հաշվի առնելով միջազգային փորձը</p> <p>բ/ ՊՆ ենթակայության իրավապահ մարմինների անձնակազմի շրջանում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վերաբերյալ իրազեկվածության բարձրացման հատուկ ուղղվածության դասընթացներ անցկացնել</p> <p>գ/ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վերաբերյալ ընդհանուր</p>	<p><b>ՀՀ պաշտպանության նախարարություն</b></p> <p>ՀՀ պաշտպանության նախարարության խաղաղապահ բրիգադի համար ապրիլի 23-ին և մայիսի 30-ին անցկացվել են «Խաղաղապահ զորքերի տեղեկացվածության բարձրացում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վերաբերյալ» թեմայով վերապատրաստումներ: Մասնակիցների ընդհանուր թիվը՝ 100 խաղաղապահ:</p> <p>Վերապատրաստումները կազմակերպվել են ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից իրականացվող «Գործողությունների ազգային ծրագրի իրականացման գործում Հայաստանի հակաթրաֆիքինգային ազգային դերակատարների կարողությունների ուժեղացում» ծրագրի օժանդակությամբ:</p> <p><b>ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ</b></p> <p>Կազմակերպվել են կյոր-սեղան սեմինարներ ՀՀ ՊՆ խաղաղապահների, քննիչների և ռազմական ոստիկանների համար՝ “Մարդկանց շահագործման քրեաիրավական բնութագիրը և որակման առանձնահատկությունները” թեմայով: Սեմինարներին մասնակցել են թվով 100 խաղաղապահ, 6 քննիչ և 19 ռազմական ոստիկաններ:</p>	<p>Միջոցառումները իրականացվել են ՀՀ ՊՆ-ի հետ համատեղ</p>

	<p>տեղեկություն ներառել մշակվելիք «Մարդու իրավունքը զինված ուժերում» դասընթացի առարկայի բովանդակության մեջ</p>		
12.	<p>Կազմակերպել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգի, կանխարգելման վերաբերյալ սեմինարներ, քննարկումներ արհմիության անդամ աշխատողների համար՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգի վերաբերյալ տեղեկատվական նյութերի տրամադրմամբ</p>		
13.	<p>Անցկացնել Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների աշխատողների համար վերապատրաստման դասընթացներ և անհրաժեշտության դեպքում վերանայել Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության կողմից մշակված ձեռնարկը:</p>	<p><b>ՀՀ արտաքին գործերի նախարարություն</b>  ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից իրականացվող «Գործողությունների ազգային ծրագրի իրականացման գործում Հայաստանի հակաթրաֆիքինգային ազգային դերակատարների կարողությունների ուժեղացում» ծրագրի օժանդակությամբ մշակվել է «Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հյուպատոսական ծառայության աշխատակիցների համար «Մարդու շահագործումը (թրաֆիքինգը) և դրա դեմ պայքարը» ձեռնարկի նախագիծը:  ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն ՀՀ ԱԳՆ աշխատակիցների, մասնավորապես նորանշանակ հյուպատոսների համար 2013 թ. նոյեմբերի 29-ին վերապատրաստման դասընթաց է անցկացվել:  <b>ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ</b>  Վերանայել և լրամշակել է ՀՀ ԱԳ նախարարության հյուպատոսական ծառայության աշխատակիցների վերապատրաստման դասընթացների “Մարդկանց շահագործումը (թրաֆիքինգը) և դրա դեմ պայքարը” ձեռնարկը, պատրաստել է ՀՀ-ից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների համար թրաֆիքինգի կանխարգելման թերթոն (տրամադրվել է ՀՀ ԱԳՆ հյուպատոսական վարչություն), իրականացրել է մեկ սեմինար՝ ՀՀ ԱԳՆ հյուպատոսական վարչության աշխատակիցների համար՝ թրաֆիքինգի</p>	<p>Իրականացվել է ՀՀ ԱԳՆ հյուպատոսական վարչության և դիվանագիտական ակադեմիայի հետ</p>

		<p>ազգային և միջազգային օրենսդրության և թրաֆիքինգի գոհերի նույնականացում և տրամադրվող աջակցություն թեմաներով: Մասնակցել է մոտ 20 ԱԳՆ աշխատակից:</p>	<p>համատեղ</p>
<p>14.</p>	<p>ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական և հյուպատոսական հիմնարկների աշխատակիցների մասնակցությամբ կազմակերպել համաժողովներ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարում ՀՀ իրավիճակի և ձեռնարկվող քայլերի վերաբերյալ իրազեկման բարձրացման նպատակով</p>	<p><b><u>ՀՀ արտաքին գործերի նախարարություն</u></b></p> <p>ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական և հյուպատոսական հիմնարկների աշխատակիցների մասնակցությամբ մյուս համաժողովը նախատեսվում է կազմակերպել սույն ժամանակացույցի 2-րդ և 38-րդ կետերով նախատեսված «Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքի ընդունումից և մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց համար փոխհատուցման համակարգի ստեղծումից հետո:</p> <p><b><u>«Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա» ՀԿ</u></b></p> <p>Ս. թ. հունիսի 3-ին կազմակերպվել էր հանդիպում՝ ԱՄՆ փոխդեսպանի ժամանակավոր պաշտոնակատար Էդվարդ Օ'Բրայենի և ամերիկյան կառավարության մի շարք աշխատակիցների հետ, որի ժամանակ քննարկվելին «Development of Anti-trafficking information platform in Armenia» ծրագրի իրականացման հետ հարցերը:</p> <p>Ա.թ. հունիսի 7-ին ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Հեֆերնը հանդիպում էր կազմակերպել, որին ներկա էին միջազգային, ինչպես նաև տեղական այն կառույցների, կազմակերպությունների ներկայացուցիչները, ովքեր աշխատում են թրաֆիքինգի դեմ պայքարի գործում:</p> <p>Հանդիպման ընթացքում ՀՀ փոխվարչապետ Արմեն Գևորգյանը և ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Հեֆերնը հատուկ կարևորություն տվեցին հեռուստաընկերություններով սոցիալական հոլովակների անվճար հեռարձակմանը, ինչին փոխվարչապետը խոստացավ հատուկ ուշադրություն դանձնել: Հանդիպմանը ներկա էր նաև գրող Վահան Զանոյանը, ով ներկայացրեց իր գիրքը: «Հեռավոր մի տեղ» կոչվող վեպի գլխավոր հերոսուհին 16-ամյա մի աղջիկ է, ով բռնությամբ հայտնվում է Մոսկվայում, ապա Դուբայում վաճառվում մի մեծահարուստի՝ համալրելով</p>	

		նրա հարեմը:	
15.	<p>Կազմակերպել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի)՝ հատկապես աշխատանքային և երեխաների շահագործման (թրաֆիքինգի) վերաբերյալ դասընթացներ ներքոհիշյալ պետական մարմինների աշխատակիցների համար՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) ՀՀ ԱԱԾ (մասնավորապես սահմանապահ ծառայության)</li> <li>2) ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության (այդ թվում նաև քննչական մարմինների աշխատակիցների) և տարածքային ստորաբաժանումների</li> <li>3) ՀՀ հատուկ քննչական ծառայության</li> <li>4) ՀՀ դատախազության</li> <li>5) ՀՀ դատավորների</li> <li>6) ՀՀ փաստաբանների պալատի փաստաբանների</li> <li>7) Սոցիալական ծառայությունների տարածքային մարմինների</li> <li>8) «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության մարզային և տարածքային մարմինների</li> <li>9) Ինտեգրված սոցիալական ծառայությունների</li> <li>10) Աշխատանքի պետական տեսչության</li> <li>11) ՀՀ առողջապահական համակարգի մասնագետների</li> <li>12) Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման</li> </ol>	<p><b><u>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն</u></b></p> <p>ՀՀ ԱԱԾ ՍԶ սահմանային վերահսկողության սահմանապահ ջոկատի ուսումնական կենտրոնում և պետական սահմանի անցման կետերում անցկացվել են վերապատրաստման դասընթացներ հետևյալ թեմաներով. օտարերկրյա պետություններում միգրանտների համար տեղեկատվական ուղեցույցների տրամադրում, երեխաների շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի վերաբերյալ միջազգային կոնվենցիաների հետ ծանոթացում, երեխաները ՀՀ մանկատներում և հատուկ դպրոցներում, թրաֆիքինգի և շահագործման հավանական զոհեր, ՀՀ օրենքների ու իրավական ակտերի ուսուցում:</p> <p><b><u>ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն</u></b></p> <p>ՀՀ ոստիկանության կրթահամալիրում «Թրաֆիքինգի» խնդիրներին վերաբերվող դասընթացներ են կազմակերպվել ոստիկանության ծառայողների տարբեր խմբերի՝ ընդհանուր առմամբ շուրջ 340 ծառայողների համար, որոնցից 36-ը հանդիսանում են ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության միջին խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողներ:</p> <p>Որոշ դասախոսություններ կարդացվել են նաև ԿՀԴՊ ԳՎ թրաֆիքինգի բաժնի ծառայողների համար:</p> <p><b><u>ՀՀ գլխավոր դատախազություն</u></b></p> <p>«Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ում ամենամյա վերապատրաստման դասընթացների շրջանակներում 109 դատախազներին ուսուցանվել են «Մարդկանց թրաֆիքինգի հանցագործության քննության միջազգային մեթոդները», «Թրաֆիքինգից ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարը» և «Մարդկանց օրգանները կամ հյուսվածքները վերցնելը», «Թրաֆիքինգի զոհերի հարցաքննության և նրանց հետ շփման հոգեբանական առանձնահատկությունները», «Մարդկանց թրաֆիքինգ. Հարկադիր աշխատանք» թեմաներով էլեկտրոնային ծրագրերը:</p> <p><b><u>ՀՀ առողջապահության նախարարություն</u></b></p> <p>Կազմակերպվել է 20 դասընթաց 550 բժիշկ-կլինիկական օրդինատորների</p>	



<p>մարմինների 13) ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության</p>	<p>համար: <b>ՀՀ արդարադատության նախարարություն</b> ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայողների վերապատրաստման 2013թ. ծրագրի՝ Մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին առնչվող միջազգային փաստաթղթերի շուրջ վերապատրաստման բաժնով, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի վերաբերյալ իրականացվել են դասընթացներ, որոնց արդյունքում վերապատրաստվել են 459 պաշտոնյա: 739 քրեակատարողական ծառայող վերապատրաստվել են մարդու իրավունքների՝ այդ թվում թրաֆիքինգի կանխարգելմանն առնչվող միջազգային փաստաթղթերի վերաբերյալ դասընթացներով: <b>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</b> 2013թ. հունիսին մեկնարկել է «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության մարզային և տարածքային մարմիններին թրաֆիքինգին վերաբերող տեղեկատվական նյութերի տրամադրման գործընթացը, որն իրականացվում է ԱՄՔՈՐ ՀԿ-ի կողմից: <b>ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ</b> ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից իրականացվող «Գործողությունների ազգային ծրագրի իրականացման գործում Հայաստանի հակաթրաֆիքինգային ազգային դերակատարների կարողությունների ուժեղացում» ծրագրի շրջանակներում մայիսի 31-ին Տավուշի (Դիլիջան և Իջևան) և հունիսի 20-ին Սյունիքի (Գորիս և Սիսիան) մարզերի զբաղվածության պետական ծառայության, աշխատանքի պետական տեսչության տարածքային ստորաբաժանումների, մարզպետարանների և քաղաքապետարանների աշխատակազմի, ինչպես նաև մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների աշխատակիցների, տեղական ՀԿ-ների համար կազմակերպվել են «Մարդկանց շահագործման դեմ պայքարի ոլորտում ազգային դերակատարների կարողությունների բարձրացումը՝ հատկապես հարկադիր աշխատանքի և երեխաների շահագործման ոլորտներում» թեմայով մեկօրյա սեմինարներ: Մասնակիցների ընդհանուր թիվը՝ 43 հոգի:</p>	<p>իրականացվել է ՀՀ Ոստիկանության, ՀՀ ԱՍՀՆ, ՏԿՆ, ՀՀ Գլխավոր դատախազության, ՀՀ Դատական դեպարտամենտի հետ համագործակցությամբ</p>
---	---	---

	<p>Կազմակերպել և իրականացվել են թվով 4 սեմինարներ (Սյունիք, Տավուշ, Շիրակ, Գեղարքունիք) ոստիկանների, աշխատանքի տեսուչների, զբաղվածության ծառայության աշխատակիցների, երեխաների իրավունքների պաշտպանության մարզային բաժինների, տեղական ՀԿ-ների, տարածքային կառավարման/տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների համար: Ընդհանուր առմամբ սեմինարներին մասնակցել են 80 անձ:</p> <p>ՀՀ դատավորների, դատախազների, ոստիկանների և քննիչների համար միջազգային փորձագետի մասնակցությամբ իրականացվել է «Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման որակման և գործերի քննության առանձնահատկությունները» թեմայով մեկ սեմինար-քննարկում: Մասնակցել են 12 դատավոր, 2 դատախազ, 2 ոստիկան, 2 քննիչ, 3 ՀԿ ներկայացուցիչ:</p> <p><b>Հուլյս և Օգնություն ՀԿ</b></p> <p>Վայոց Ձորի մարզի ք. Ջերմուկում կազմակերպվել է սեմինար-վարժանք իրավապահ մարմինների, Սոցիալական ծառայությունների տարածքային մարմինների, «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության մարզային և տարածքային մարմինների աշխատակիցների համար:</p> <p>Մասնակցել է 22 աշխատակից (16 Ոստիկանության աշխատակիցներ, 1 աշխատակից՝ Աշխատանքի տարածքային տեսչությունից, 3 աշխատակից՝ «Զբաղվածության պետական ծառայության գործակալություններից», 2 աշխատակից՝ ՀԿ-ներից):</p> <p>Նախապատրաստվել է «Թրաֆիքինգի/շահագործման անչափահաս տուժածների քրեական վարույթի իրականացման կարգը» ձեռնարկը, որը նախատեսված է ոստիկանության քննիչների, դատախազների, երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող անձանց համար: Ձեռնարկի նյութի հիման վրա կազմակերպվելու են մարզային ոստիկանության աշխատակիցների և երեխայի իրավունքների պաշտպանությամբ զբաղվող աշխատակիցների վերապատրաստումներ:</p> <p>2013-2014 թթ. ընթացքում նախատեսված է անցկացնել 7 սեմինար 150 մասնակցի համար՝ Երևանի, Շիրակի, Գեղարքունիկի, Արմավիրի, Արարատի և Լոռու մարզերից:</p>	
--	--	--

	<p>Կազմակերպվել է կլոր սեղան քննարկում «Թրաֆիքինգի/շահագործման անչափահաս տուժածների քրեական վարույթի իրականացման կարգը» ձեռնարկի հեղինակների, գրախոսների, ՀԿ-ների աշխատակիցների, ՀՀ ոստիկանության աշխատակիցների, Դատախազության դպրոցի աշխատակիցների մասնակցությամբ:</p> <p>2013թ. հունիսին կազմակերպվել է «Մարդկանց շահագործման կանխարգելման հնարավորությունները» սեմինար տուրիստական գործակալությունների աշխատակիցների համար:</p> <p><b><u>«Մարդը կարիքի մեջ» չեխական ՀԿ հայաստանյան ներկայացուցչություն</u></b></p> <p>Կազմակերպվել է դասընթաց «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության 7 տարածքային կենտրոնների աշխատողների համար: Դասընթացն ընդգրկում էր միգրացիա և թրաֆիքինգ թեմաները:</p> <p>ՀՀ 4 մարզերում՝ Արարատի, Արմավիրի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում կազմակերպվել են դասընթացներ , որոնց մասնակցել են 73 համայնքների աշխատակազմի քարտուղարներ, մարզպետարանների (Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության, Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության, Կրթության, մշակույթի և սպորտի վարչության, Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի) 20 և «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության մարզային և տարածքային մարմինների 22 աշխատակիցներ:</p> <p><b><u>Միգրացիայի միջազգային կազմակերպություն</u></b></p> <p>ՄՄԿ փորձագետների կողմից «Թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկման ամրապնդումը կրթության միջոցով Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում» տարածաշրջանային ծրագրի շրջանակում կազմակերպվել է ուսուցում ուսուցանողների համար մարդու թրաֆիքինգի զոհերի նույնականացման և աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ 25 բուժաշխատողների և 18 սոցիալական աշխատողների համար (Սոցիալական ծառայությունների տարածքային մարմինների և «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության մարզային և տարածքային մարմինների ներկայացուցիչներ):</p>	<p>Իրականացվել է ՀՀ ԱՍՀՆ հետ համագործակցությամբ</p> <p>Ուսուցումը կազմակերպվել է ՄՄԿ ձորձագետների կողմից «Թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկման ամրապնդումը կրթության միջոցով Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում» տարածաշրջանային ծրագրի շրջանակում</p>
--	---	--

		<p><b>ԱՄՔՈՐ ՀԿ Հայաստանյան մասնաճյուղ</b></p> <p>Հաշվետու ժամանակաշրջանում ԱՄՔՈՐ-ը անց է կացրել կլոր սեղան քննարկում պետական և ոչ պետական կառույցների աշխատողների համար «Բիզնես ձեռնարկությունների համար թրաֆիքինգի և հարկադիր աշխատանքի դեմ արդյունավետ պայքարի համակարգՎ թեմայով:</p> <p>Անց է կացվել 1 դասընթաց ՀՀ Ոստիկանության աշխատակիցների համար՝ «Թրաֆիքինգ հարկադիր աշխատանքի նպատակով» թեմայով:</p> <p>Անց են կացվել նաև դասընթացներ/սեմինարներ Արարատ, Կոտայք և Արմավիր մարզերի մարզպետարանների աշխատակիցների համար, ինչպես նաև Արարատ մարզի սեզոնային միգրացիայի բարձր ցուցանիշներ ունեցող վեց գյուղերի գյուղապետերի համար:</p>	
16.	Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների աշխատողների համար կազմակերպել հատուկ դասընթացներ երեխաների շահագործման (թրաֆիքինգի) դեպքերի կանխարգելման, հայտնաբերման և աջակցության կազմակերպման վերաբերյալ	<p><b>ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ</b></p> <p>«Երեխայի թրաֆիքինգի կամ շահագործման առանձնահատկությունները» թեմայով կազմակերպվել է մեկ սեմինար-վարժանք Երևան քաղաքի երեխայի խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատության, Երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ դպրոցի և Երևանի «Չատիկ» երեխաների աջակցության կենտրոնի թվով 22 աշխատակիցների համար(սոցիալական աշխատողներ, հոգեբաններ, դաստիարակներ, բժիշկ/բուժքույրեր, իրավաբաններ):</p>	Իրականացվել է ՀՀ ԱՍՀՆ-ի հետ համագործակցությամբ
17.	Շարունակել հանրակրթական դպրոցների մանկավարժների վերապատրաստման դասընթացները՝ «Թրաֆիքինգ» ձեռնարկի կիրառմամբ	<p><b>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</b></p> <p>Միգրացիայի միջազգային կազմակերպության Հայաստանի առաքելության գրասենյակի կողմից 2013թ. ապրիլ և մայիս ամիսների ընթացքում իրականացվել են դասընթացներ «Հասարակագիտություն» առարկայի 40 ուսուցիչների համար (20 ուսուցիչ Երևանից և երկուական ուսուցիչ ՀՀ յուրաքանչյուր մարզից)՝ Հանրակրթական հիմնական դպրոցի «Հասարակագիտություն» առարկայի 8-9-րդ դասարանների չափորոշչում և ծրագրում տեղ գտած «Թրաֆիքինգ» թեմայի արդյունավետ դասավանդման նպատակով, ինչպես նաև իրականացվել են դասախոսումներ ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի հասարակագիտության մասնագետների կողմից:</p> <p>Միաժամանակ իրականացվել է նաև ծրագրի առաջին փուլի ընթացքում փորձագիտական խմբի կողմից մշակված «Թրաֆիքինգ. մարդկանց</p>	Ծրագիրը իրականացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության և Միգրացիայի միջազգային կազմակերպության Հայաստանի առաքելության միջև 2012թ. ստորագրված հուշագրի շրջանակներում:

		<p>շահագործում» ուսումնաստանողական ձեռնարկի լրամշակում՝ միջազգային փորձագետի կողմից արված առաջարկությունների հիման վրա: Լրամշակված ձեռնարկն օգտագործվելու է «Հասարակագիտություն» առարկայի ուսուցիչների վերապատրաստումների ընթացքում:</p> <p>Նախատեսվում է վերահրատարակել լրամշակված ձեռնարկից 1500 օրինակ: «Մարդը կարիքի մեջ» (“People In Need” PIN) չեխական բարեգործական հասարակական կազմակերպության հայաստանյան ներկայացուցչությունը «Եկենք խոսենք ֆիլմերի մասին Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում Կոտայքի, Արարատի, Արմավիրի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում, ինչպես նաև Երևանում իրականացրել է 62 դպրոցների 77 ուսուցիչների վերապատրաստում: Մասնակիցները «Հասարակագիտություն» առարկայի ժամերին օգտագործել են մարդու իրավունքներին նվիրված վավերագրական ֆիլմերը որպես ուսուցման նյութ, այդ թվում թրաֆիքինգի թեմայով: Ֆիլմերի ցուցադրումից հետո կազմակերպվել է քննարկում աշակերտների հետ՝ ինտերակտիվ ուսուցման մեթոդներով:</p> <p>ՀՀ կրթության ազգային ինստիտուտի հետ համատեղ կազմվել է ուսուցչի ձեռնարկ, ֆիլմերին հաջորդող քննարկումները կազմակերպելու համար: Միաժամանակ «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի կողմից Շիրակի մարզի Բասեն գյուղի հանրակրթական դպրոցի ուսուցիչների համար կազմակերպվել է դասընթաց թրաֆիքինգի թեմայով:</p> <p><b><u>Միգրացիայի միջազգային կազմակերպություն</u></b></p> <p>Իրականացվել է «Թրաֆիքինգ» ձեռնարկի լրամշակում և հրատարակում: Ձեռնարկի 1100 օրինակ տրամադրվել է ՀՀ Կրթության ազգային ինստիտուտին հանրակրթական դպրոցների մանկավարժների վերապատրաստումների ընթացքում որպես բաշխման նյութ օգտագործելու նպատակով:</p>	
18.	<p>Կազմակերպել երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի մասնագետների խորացված ուսուցում, ուղղված երեխաների շահագործման դեպքերի հայտնաբերմանը, կանխմանը և</p>		<p>Ազգային ծրագրով նախատեսված են կատարել 2014թ.</p>

	պաշտպանության կազմակերպմանը		
19.	<p>Իրավապահ մարմինների և աշխատանքի պետական տեսչության աշխատակիցների համար համատեղ քննարկումների կազմակերպում՝ աշխատանքային թրաֆիքինգի դեպքերի հայտնաբերման և կանխարգելման արդյունավետության բարձրացման նպատակով</p>	<p><b><u>ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ</u></b>  ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից իրականացվող «Գործողությունների ազգային ծրագրի իրականացման գործում Հայաստանի հակաթրաֆիքինգային ազգային դերակատարների կարողությունների ուժեղացում» ծրագրի շրջանակներում փետրվարի 14-ին և ապրիլի 26-ին անցկացվել են ՀՀ-ում հարկադիր աշխատանքի դեպքերի բացահայտման խնդիրներին նվիրված կլոր սեղան հանդիպումներ՝ ՀՀ ոստիկանության, ՀՀ գլխավոր դատախազության և ՀՀ աշխատանքի պետական տեսչության ներկայացուցիչների մասնակցությամբ:  Մասնակիցների ընդհանուր թիվը՝ 18 հոգի:  ՀՀ ոստիկանների, քննիչների, դատախազների և աշխատանքի տեսչիչների մասնակցությամբ կազմակերպվել են թվով 3 կլոր-սեղան քննարկումներ՝ աշխատանքային թրաֆիքինգի և հարկադիր աշխատանքի դեպքերի բացահայտմանն ուղղված աշխատանքները բարելավելու համար:  Քննարկումները շարունակվելու են նաև 2014 թվականին և ամփոփվելու են առաջարկություններով:</p>	<p>Իրականացվել է ՀՀ Ոստիկանության, ՀՀ Գլխավոր դատախազության, ՀՀ Դատական դեպարտամենտի հետ համագործակցությամբ</p>
20.	<p>ՀՀ դատախազության, ոստիկանության, և ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների համար կազմակերպել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) և փողերի լվացման հետ կապված հանցագործությունների բացահայտման, քննության և քրեական հետապնդման վերաբերյալ համատեղ սեմինար-քննարկումներ</p>	<p><b><u>ՀՀ կառավարության առընթեր ազգային անվտանգության ծառայություն</u></b>  ԱԶ աշխատակիցները մասնակցել են Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող «Արևելյան գործընկերության սահմանների համալիր կառավարման առաջատար նախաձեռնության թրեյնինգային նախագծի» շրջանակներում միգրացիայի քաղաքականության զարգացման միջազգային կենտրոնի կողմից կազմակերպված «Կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ իրավապահ գերատեսչությունների իրազեկության բարձրացումը» և «Մարդկանց առևտրի դեմ պայքարի» թեմաներով տարածաշրջանային սեմինարներին: Բացի այդ, ԱԶ զինծառայողները մասնակցել են Մեծ Բրիտանիայի Հանցավորության դեմ պայքարի ազգային գործակալության և ՀՀ դատախազության դպրոցի հետ համատեղ կազմակերպված «Մարդկանց թրաֆիքինգի զոհերից ապացույցների ձեռք բերման լավագույն եղանակները» սեմինար-քննարկումներին:  <b><u>ՀՀ գլխավոր դատախազություն</u></b></p>	

		<p>ՀՀ դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Ա.Մարուխյանը մասնակցել է «Հույս և օգնություն» ՀԿ կողմից Երևանում 2013թ. հոկտեմբերի 9-ին կայացած «Երեխաների սեռական շահագործում՝ ՀՀ-ում իրավաճակի գնահատման և պայքարի ռազմավարություն» թեմայով կլոր սեղանին:</p> <p>ՀՀ դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Ա.Մարուխյանը մասնակցել է 2013թ. դեկտեմբերի 6-ին Մոսկվայում կայացած «Մարդկանց առևտրի կանխարգելման և դրա զոհերին օգնություն ցույց տալու հարցում ԱՊՀ և մասնակից պետությունների համակարգող մարմինների դերն ու խնդիրները» թեմայով կլոր սեղանին:</p>	
21.	<p>Շարունակել իրականացնել «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագրի շրջանակներում սոցիալական, կրթական, առողջապահական միջոցառումներ</p>	<p><b>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</b></p> <p>«Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագրով նախատեսված 4 ենթածրագրերի շրջանակներում 82 շրջանավարտ ստացել է աջակցություն:</p> <p>Մասնավորապես.</p> <p>Շահառուների հետագա կյանքին նախապատրաստվելու կեսճանապարհային ենթածրագիր՝ 25 շրջանավարտ;</p> <p>Շահառուների հետագա կյանքի պայմանների վերահսկողություն՝ 37 շրջանավարտ;</p> <p>Մասնագիտական կողմնորոշում, ուսուցում, վերապատրաստում՝ 5 շրջանավարտ;</p> <p>Բուժման կազմակերպում՝ 15 շրջանավարտ:</p> <p>Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.</p> <p>Ուսումնասիրություն, անհատական ծրագրերի կազմում – 17 շրջանավարտ</p> <p>Շահառուներին հետագա կյանքին նախապատրաստելու կեսճանապարհային ենթածրագիր – 25 հոգի</p> <p>Շահառուների հետագա կյանքի պայմանների վերահսկողություն – 37 երեխա</p> <p>Մասնագիտական կողմնորոշում, ուսուցում, վերապատրաստում – 12</p>	

		<p>երեխա Բնակարանների նոտարական ձևակերպում – 15 բնակարան Բուժօգնության կազմակերպում – 15 երեխա</p>	
22.	<p>Հանրակրթական դպրոցների սովորողների շրջանում մարդու իրավունքների (այդ թվում նաև թրաֆիքինգին և գենդերային հարցերին) վերաբերող թեմաների ուսուցում</p>	<p><b>«Մարդը կարիքի մեջ» չեխական ՀԿ հայաստանյան ներկայացուցչություն</b>      ՀՀ Կոտայքի, Արարատի մարզերում և Երևանում իրականացրել է 23 դպրոցների 45 ուսուցիչների վերապատրաստում:      «Հասարակագիտություն» առարկայի ժամերին օգտագործել են մարդու իրավունքներին նվիրված վավերագրական ֆիլմերը որպես ուսուցման նյութ, այդ թվում թրաֆիքինգի թեմայով: Ֆիլմերի ցուցադրումից հետո կազմակերպվել է քննարկում աշակերտների հետ՝ ինտերակտիվ ուսուցման մեթոդներով:      Կազմակերպվել է ուսուցում ՀՀ Կոտայքի, Արարատի, Արմավիրի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի 62 դպրոցների 77 ուսուցիչների համար: Հասարակագիտություն առարկայի ժամերին մարդու իրավունքների (այդ թվում նաև թրաֆիքինգին և գենդերային հարցերին) վերաբերող թեմաների դասավանդմանը որպես նոր մեթոդ ավելացվել է մարդու իրավունքներին նվիրված փոքր վավերագրական ֆիլմեր ցուցադրելը և թեմայի շուրջ քննարկումներ կազմակերպելը:  <b>Հայկական Կարիտաս ԲՀԿ</b>      Շիրակի մարզի Ամասյա գյուղի քոլեջում և դպրոցի բարձր դասարանների աշակերտների համար կազմակերպվել է սեմինար քննարկումներ թրաֆիքինգի և անօրինական միգրացիայի վտանգների վերաբերյալ: Մասնակիցների ընդհանուր թիվը՝ 50 աշակերտ:      Երևանի «Փոքրիկ Իշխան» մասնավոր դպրոցում կազմակերպվել է թրաֆիքինգի թեմայով սեմինար-քննարկում: Մասնակիցների քանակը 24 հոգի:      Երևանի 94-րդ դպրոցի 23 աշակերտների համար կազմակերպվել է թրաֆիքինգի թեմայով սեմինար քննարկում, թեմատիկ «Ստրկություն» ֆիլմի ցուցադրություն և քննարկում:      Շիրակի մարզի Բասեն գյուղի դպրոցի բարձր դասարանների աշակերտների, և ուսուցիչների համար կազմակերպվել է դասընթաց</p>	<p>Ուսուցումը կազմակերպվել է “Աջակցություն վավերագրության զարգացմանը Հարավային Կովկասում” տարածաշրջանային ծրագրի շրջանակում (2012-2015)</p>



		<p>թրաֆիքինգի թեմայով: Մասնակիցների ընդհանուր թիվը՝ 20 հոգի:</p> <p><b>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</b></p> <p>Հանրակրթական ավագ դպրոցի 12-րդ դասարանի դասագրքերում ներառված են թրաֆիքինգին վերաբերող հետևյալ ուսումնական նյութերը.</p> <p>«Հասարակագիտություն» դասագրքում (թեմա՝ Գլոբալացման ազդեցությունը ժամանակակից հայկական հասարակության ներկայացուցիչների վրա ) առկա է «Մարդկանց շահագործումը (թրաֆիքինգը) որպես արդի գլոբալ հասարակության բացասական երևույթ» նյութը:</p> <p>Համաշխարհային պատմության դասագրքում «Արդի համաշխարհային զարգացման հիմնախնդիրները» գլխում ներառված է «Պայքար միջազգային ահաբեկչության, թմրամոլության և թրաֆիքինգի դեմ» ենթաթեման:</p> <p>Հանրակրթական հիմնական դպրոցի Հասարակագիտություն առարկայի ծրագրում «Թրաֆիքինգ» հասկացությունը ներառված է 9-րդ դասարանի բաժնում:</p>	
23.	<p>ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի շրջանակներում իրականացվելիք «Աշխատող երեխաների վերաբերյալ հետազոտության» արդյունքերի քննարկում և անհրաժեշտության դեպքում թրաֆիքինգի դեմ պայքարին առնչվող առաջարկությունների մշակում</p>		<p>Ազգային ծրագրով նախատեսված են կատարել 2014թ.</p>
24.	<p>Մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների և դասավանդողների համար կազմակերպել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վերաբերյալ դասախոսություններ</p>	<p><b>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</b></p> <p>2013թ. փետրվար և մարտ ամիսների ընթացքում իրականացվել է 2012թ. մշակված «Մարդու թրաֆիքինգ կամ շահագործում» խորագրով ուսումնաօժանդակ ձեռնարկի փորձարկում 6 բուհերի՝ Երևանի պետական համալսարանի, Երևանի Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի, Հայկական բաց համալսարանի, Գյումրու</p>	<p>Ծրագիրը իրականացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության և Միգրացիայի միջազգային կազ</p>

	<p>Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի, Գավառի պետական համալսարանի ընդհանուր թվով շուրջ 550 ուսանողների մասնակցությամբ: Ուսանողների հետ անցկացվել է նշված ձեռնարկի 4 թեմաների ուսուցում: Փորձարկումից հետո ձեռնարկը լրամշակվել է՝ ուսանողների և դասախոսների դիտողությունների ու առաջարկությունների հիման վրա:</p> <p>Բացի այդ, 2013թ մայիս ամսին իրականացվել է սեմինար թրաֆիքինգի թեմայով երիտասարդների համար՝ փոխադարձ ուսուցման սկզբունքով: Սեմինարին մասնակցել են 22 երիտասարդներ՝ Երևանից, Շիրակի և Սյունիքի մարզերից: Վերապատրաստված երիտասարդները թրաֆիքինգի վերաբերյալ իրենց գիտելիքները փոխանցելու են իրենց հասակակիցներին՝ սեմինարների, ֆորում-թատրոնների, մրցույթների կազմակերպման և անցկացման միջոցով:</p> <p>Թրաֆիքինգի թեմայով սեմինար-քննարկում է կազմակերպվել նաև Գավառի պետական համալսարանի 35 ուսանողների համար:</p> <p><b>Հայաստանի գործատուների հանրապետական միություն</b></p> <p>Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի 10 ուսանողի համար 2013 թվականի մարտի 13-ին կազմակերպվել է վերապատրաստում «Թրաֆիքինգ և հարկադիր աշխատանք» թեմաներով: Վերապատրաստումն անց է կացվել ՀԳՀՄ գրասենյակում:</p> <p>Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի ուսանողները կատարել են ուսումնասիրություն ցիրկուլյար միգրացիայի վերաբերյալ: Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի ուսանողները կատարել են նաև ցիրկուլյար միգրացիայի վերաբերյալ ուսումնասիրություն/հետազոտություն:</p> <p>2013 թ. ապրիլի 11-ից 30-ը ժամանակահատվածում իրականացնել է սեմինարների շարք՝ թրաֆիկինգ, հարկադիր աշխատանք ՄԻԱՎ/ՁԻԱՀ թեմաներով: Սեմինարները անց է կացվել Երևանի 7 քոլեջներում՝ Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջում, Երևանի պետական տարածաշրջանային N2 քոլեջում, Երևանի պետական ինֆորմատիկայի քոլեջում, Երևանի մշակույթի պետական քոլեջում, Երևանի թիվ 1 տարածաշրջանային քոլեջում, Իրավաունտեսագիտական և կառավարման</p>	<p>մակերպության Հայաստանի առաքելության միջև 2012թ. ստորագրված հուշագրի շրջանակներում:</p>
--	---	---

		քղլեջ, կրթահամալիրում, Հայ- ամերիկյան պետական բժշկական քղլեջում:	
25.	<p>Աղքատությունը և գործազրկությունը դիտելով որպես մարդկանց շահագործմանը (թրաֆիքինգին) նպաստող գործոններ՝ խոցելի խմբերի համար իրականացնել ձեռներեցությամբ զբաղվելուն նպաստող աջակցության ծրագրեր, այդ թվում նաև՝ ա/ ձեռնարկատիրության գործունեությանն ուղղված մասնագիտական ուսուցման կազմակերպմամբ բ/ ֆինանսական աջակցության տրամադրմամբ</p>	<p><b>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</b></p> <p>Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման բնագավառում կանանց ձեռնարկատիրական նախաձեռնողության խրախուսման, տնտեսության տարբեր ճյուղերում կին գործարարների նվաճումներն ըստ արժանավույն գնահատելու, հանրահռչակման և սատարման նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետը հայտարարել է մրցանակաբաշխություն 6 ուղղություններով.</p> <ul style="list-style-type: none"> <li>• «Լավագույն կին գործատու»</li> <li>• «Լավագույն կին նորարար, նախաձեռնող»</li> <li>• «Լավագույն կին բարեգործ»</li> <li>• «Կին արտադրողի լավագույն ապրանքանիշ»</li> <li>• «Լավագույն երիտասարդ կին գործարար»</li> <li>• «Լավագույն սկսնակ կին գործարար»</li> </ul> <p>Մրցանակաբաշխության կազմակերպչական աշխատանքները իրականացվել է Հայաստանի «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» (ՓՄՁ ՋԱԿ) հիմնադրամի կողմից:</p> <p>Մրցանակաբաշխությանը ներկայացվել է 159 հայտ, որոնցից 37-ը՝ Երևանից և 122-ը՝ մարզերից:</p> <p>2013թ. մարտի 1-ից մեկնարկել է Ասիական զարգացման բանկի (ADB) տեխնիկական աջակցության շրջանակներում իրականացվող «Կանանց ձեռներեցության զարգացում» ծրագիրը, որը տևելու է մինչև 2015 թ. դեկտեմբերը:</p> <p>Ծրագրի նպատակն է բարելավել կանանց ձեռնարկատիրական կարողությունները և բարձրացնել ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը կին գործարարների համար:</p> <p>Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ հիմնադրամը ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) հետ համատեղ իրականացնում է «Արտադրական աշխատանք Հայաստանի երիտասարդների համար. Աջակցություն երիտասար գործարարներին» ծրագիրը:</p> <p>Ծրագրի հիմնական նպատակն է երիտասարդ գործարարներին՝</p>	

հատկապես երիտասարդ ընտանիքներին և կանանց աջակցության ցուցաբերումը, նրանց ձեռնարկատիրական հմտությունների զարգացման և ֆինանսական միջոցների հասանելիության ապահովման համար՝ ի նպաստ երկրի մասնավոր հատվածի զարգացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, աղքատության և գործազրկության կրճատմանը:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կողմից 2013 թվականի ընթացքում ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրերի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել 17243 գործարարների, այդ թվում՝ 8923 կանանց՝ ստորև աղյուսակում նշված ծրագրային ուղղություններով.

Հ/ Հ	Աջակցության ուղղությունները	Ընդհանուր աջակցության ստացածների թիվը	Այդ թվում աջակցություն ստացած կանանց թիվը
1	Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	15647	8293
2	Ուսուցողական աջակցություն	521	324
3	Սկսնակ գործարարներին աջակցություն	462	144
4	Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն	224	61
5	Վարկային երաշխավորությունների տրամադրում	19	1
6	Ձեռնարկությունների եվրոպական ցանցի հաղորդակցման կենտրոնի գործունեության շրջանակներում	243	71

			տրամադրված աջակցություն			
		7	Արդյունաբերական համակարգերի կառուցմանն աջակցություն	127	29	
			Ընդամենը	17243	8923	
26.	Գործազուրկների համար կազմակերպել մասնագիտական ուսուցման դասընթացներ՝ հատկապես գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր հանդիսացող աշխատանք փնտրող անձանց համար	<p><b>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</b>          Մասնագիտական ուսուցման դասընթացներին ընդգրկվել է 1500 աշխատանք փնտրող, որից 212-ը գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր: Դասընթացներն ավարտածների 51 %-ը դասընթացի ավարտից հետո 3 ամսվա ընթացքում տեղավորվել է աշխատանքի:</p>				
27.	Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց հասարակության մեջ վերաինտեգրելու նպատակով, ինչպես նաև նրանց կրկնազոհացումից խուսափելու համար կազմակերպել մասնագիտական ուսուցման դասընթացներ՝ զբաղվածության առաջարկների տրամադրմամբ	<p><b>ԱՄՔՈՐ ՀԿ Հայաստանյան մասնաճյուղ</b>          ՀԿ-ն մասնագիտական դասընթացներ է կազմակերպել:          6 հոգի մասնակցել են մասնագիտական դասընթացների, որոնցից 3-ը մասնակցել են խոհարարության և հրուշակագործության դասընթացների, 2-ը օտար լեզուների դասընթացներ և 1-ը համակարգչային: Դասընթացը ավարտելուց հետո զոհերից մեկը ընդունվել է աշխատանքի:</p>				
28.	ՀՀ վերադարձող՝ մարդկանց շահագործմանը (թրաֆիքինգի) ենթարկված քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված զբաղվածության ծրագրերի վարում և նոր ծրագրերի ներդրում	<p><b>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</b>          2013թ. ընթացքում զբաղվածության տարածքային կենտրոններում հաշվառվել է մեկ անձ (կին), և որպես աշխատաշուկայում անմրցունակ անձ ընդգրկվելով “Ախատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տողավորման աջակցության նպատակով աշխատավարձի փոխհատուցման” ծրագրում տեղավորվել է աշխատանքի:</p>				
29.	Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգի վերաբերյալ հասարակության իրազեկման բարձրացման նպատակով՝ ԶԼՄ-ների հետ համագործակցությամբ	<p><b>ՀՀ արտաքին գործերի նախարարություն</b>          Ս.թ. հունիսի 12-ին «Հայելի» մամուլի ակումբում տեղի ունեցավ մամուլի ասուլիս, որը վերաբերում էր ԱՄՆ պետքարտուղարության 2013թ.-ի զեկույցին, որում Հայաստանը տեղ գտավ 1-ին խմբի երկրների շարքում:</p>				<a href="http://www.antitrafficki ng.am/?laid=2&amp;">http://www.antitrafficki ng.am/?laid=2&amp;</a>

<p>շարունակել կազմակերպել հեռուստատեսային և ռադիո հաղորդումներ, քննարկումներ, հանդիպումներ և այլն</p>	<p>Ասուլիսին մասնակցեցին ՀՀ ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության պետ, ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի ղեկավար Վահրամ Կաժոյանը, ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության երրորդ վարչության պետ Տիգրան Պետրոսյանը, «Մարդը կարիքի մեջ» (People in need) հայաստանյան կազմակերպության թրաֆիքինգի և միգրացիոն ծրագրերի ղեկավար Տաթևիկ Բեժանյանը և «Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա» ՀԿ նախագահ Արզուման Հարությունյանը: «Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա» ՀԿ ասուլիսի վերաբերյալ նյութը տեղադրել է <a href="http://www.antitrafficking.am">www.antitrafficking.am</a> կայքէջում:</p> <p>ՀՀ ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության պետ, ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի ղեկավար Վահրամ Կաժոյանը ս.թ. հունիսի 13-ին մասնակցել է նաև Արմնյուզ հեռուստաալիքի «Բանաձև» հաղորդմանը, որի նվիրված էր ԱՄՆ պետքարտուղարության 2013թ.-ի զեկույցին և Հայաստանում իրականացվող հակաթրաֆիքինգային նախաձեռնություններին: Հաղորդման գովազդային հատվածներում ցուցադրվել են թրաֆիքինգի կանխարգելման թեմայով սոցիալական հոլովակներ:</p> <p><b><u>ՀՀ ոստիկանություն</u></b></p> <p>Հասարակության իրազեկումը բարձրացնելու նպատակով ՀՀ ոստիկանությունը կազմակերպել է “Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա” ՀԿ-ի կողմից պատրաստված թրաֆիքինգի կանխարգելմանն ուղղված թվով 6 սոցիալական հոլովակների անվճար պարբերաբար հեռարձակումը Հանրային Հեռուստաընկերության 02 և Արմենիա հեռուստաընկերության Հերթապահ մաս ծրագրերի շրջանակում:</p> <p><b><u>ՀՀ տարածաքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն</u></b></p> <p>Կազմակերպվել են հետևյալ 5 միջոցառումները. 2013 թ.-ի փետրվարի 14 - ՀՀ հեռուստաընկերության Հայոց հարց հեռուստաշոու, թեման՝ միգրացիա;</p>	
---	--	--

		<p>2013 թ. ապրիլի 16 - Արմենիա հեռուստաընկերության Կենդանի մատյան հաղորդաշար, թեման՝ վերադարձի և վերաինտեգրման խնդիրներ;</p> <p>2013 թ. ապրիլի 29 - Արմենիա հեռուստաընկերության Կենդանի մատյան հաղորդաշար, թեման՝ պայքար անօրինական միգրացիայի դեմ:</p> <p>2013 թ. մայիսի 8 - «Հայաստանից դեպի Բելգիա ուղղվող անկանոն միգրացիայի կանխարգելում՝ պոստենցիալ միգրանտների շրջանում իրազեկվածության բարձրացման միջոցով» ծրագրի շրջանակներում ՋԼՄ-ների, հասարակական և խնդրով հետաքրքրված այլ կազմակերպությունների ներկայացուցիչների համար անցկացված կլոր սեղան. թեման – օգտակար տեղեկություններ Բելգիա մեկնողների համար և ՀՀ-ԵՄ վիզային ռեժիմի ազատականացման մասին համաձայնագիրը</p> <p>2013 թ. նոյեմբերի 2 –Սիվիլնեթ TV, թեման - Ռեադմիսիա, վախենալ, թե ոչ</p> <p>Մասնակիցների թիվը՝ ըստ թիրախային խմբերի՝ վերը նշված հեռուստաընկերությունների և ՋԼՄ-երի լսարանը:</p> <p><b>ՀՀ գլխավոր դատախազության</b></p> <p>ՀՀ դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Ա.Մարությանը և վարչության ավագ դատախազ Վ.Հովհաննիսյանը մասնակցել և ելույթ են ունեցել ԱՐ և Երկիր Մեդիա հեռուստաընկերությունների կողմից նախապատրաստված թրաֆիքինգի հիմնախնդիրներին վերաբերող թվով 3 հեռուստահաղորդումների:</p> <p><b>ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ</b></p> <p>Նկարահանվել է սոցիալական գովազդ, որը շուրջ երկու շաբաթ ցուցադրվել հեռուստատեսային չորս ամենավարկանիշային ալիքներով օրական մի քանի անգամ: Նպատակը՝ հոլովակի միջոցով հանրությանը իրազեկելն էր այն մասին, որ մուրացիկ երեխաներին զումար տալով ոչ թե օգնում, այլ վնասում են նրանց: Միևնույն ժամանակ գովազդվել է Պաշտպանի 116 թեժ գիծը, որին զանգահարելով և տեղեկություններ տրամադրելով մուրացկանությանը զբաղվող երեխաների մասին, հնարավոր եղավ աջակցություն տրամադրել նրանց: Սոցիալական աշխատողներից և</p>	<p><a href="http://www.police.am/am/programs/category/02-programs.html">http://www.police.am/am/programs/category/02-programs.html</a></p> <p><a href="http://www.police.am/a">http://www.police.am/a</a></p>
--	--	---	---

	<p>հոգեբաններից կազմված աշխատանքային խմբի կողմից իրականացվել շուրջ 3 ամիս իրականացվել են պարբերական շրջայցեր քաղաքի տարբեր շրջաններում, որի նպատակը մուրացիկ երեխաների հայտնաբերումն էր և նրանց աջակցության տրամադրումը:</p> <p><b>«Հույս և Օգնության» ՀԿ</b></p> <p>«Հույս և Օգնության» ՀԿ Թեժ Գծի ծառայության վերաբերյալ գովազդվել է հետևյալ հեռուստաընկերություններով, ռադիոներով և շաբաթաթերթերով՝ Ֆորտունա ՀՏ, ք.Վանաձոր, Միր ՀՏ, ռուսերեն լեզվով, ք.Երևան, ռադիո Շիրակ, ք. Գյումրի և Գինդ շաբաթաթերթով, Շանթ հեռուստաընկերության:</p> <p><b>ԱՄՔՈՐ ՀԿ Հայաստանյան մասնաճյուղ</b></p> <p>ԱՄՔՈՐ-ը տեղադրել է թրաֆիքինգի կանխարգելմանը ուղղված թեմայով և թեժ գծի հեռախոսահամարով հայտարարություններ Գինդ, Եթեր, TV Մոլ, TV Ալիք թերթերում, ինչպես նաև վազող տողով Շանթ-ի առբանյակային հեռուստաալիքով:</p> <p><b>«Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա» ՀԿ</b></p> <p>Հայաստանում թրաֆիքինգի կանխարգելման միջոցառումների շրջանակում “Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա” ՀԿ-ն՝ ՀՀ Ոստիկանության աջակցությամբ կազմակերպել է ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հետ համատեղ իրականացված ծրագրով պատրաստված թրաֆիքինգի կանխարգելման ուղղված սոցիալական հոլովակների անվճար հեռարձակում նշված հեռուստաընկերություններով: 3 նոր հոլովակները հեռարձակվել են նշված ժամանակահատվածում ամեն օր, օրը 1 անգամ:</p> <p>«ՀԿ Կենտրոն» ՔՀՁ ՀԿ-ն 2013թ. նոյեմբերի 16-ին Լոռու մարզի Վանաձոր քաղաքում կազմակերպեց Վավերագրական ֆիլմերի փառատոն, որի ընթացքում ցուցադրվեց ֆիլմ «Մեկ Աշխարհ» միջազգային կինոփառատոնի ֆիլմացանկից թրաֆիքինգի թեմայով: Կինոփառատոնը կազմակերպվեց «ֆիլմերը որպես հասարակական խնդիրների վերհանման միջոց» ծրագրի շրջանակներում, որի նպատակն էր աջակցել վավերագրական ֆիլմի՝ որպես միջմշակութային երկխոսության միջոցի զարգացմանը, նպաստել հետաքրքրության աճին, վավերագրական ֆիլմերի դիտման մշակույթի ձևավորմանն ու զարգացմանը, վերջիններիս միջոցով վեր հանել և</p>	<p><a href="http://m/programs/category/duty-desk.html">m/programs/category/duty-desk.html</a></p>
--	---	---



		<p>քննարկել մարդու իրավունքների հետ կապված հարցեր: Արզուման Հարությունյանը հրավիրվեց այս միջոցառմանը որպես փորձագետ: Ֆիլմի դիտումից հետո տեղի ունեցավ քննարկում ֆիլմի սյուժեի և երևույթի մասին ընդհանրապես:</p> <p>2013թ. նոյեմբերի 22-ին Հայաստանի երկրորդ հեռուստաալիքի «Խոսքի իրավունք» հաղորդումը ևս անդրադարձավ թրաֆիքինգ երևույթին և Հայաստանում առկա իրավիճակին: Հաղորդման հյուրը դարձյալ Արզուման Հարությունյանն էր, ով փորձեց սահմանափակ ժամանակատվածում ներկայացնել իր և իր գործընկերների ունեցած վերջին ձեռքբերումները և ամփոփել Հայաստանի ներկայիս իրավիճակը խնդրի հետ կապված:</p> <p>Դեկտեմբերի 3-ին Արմենիա հեռուստաընկերության «Մարդկային գործոն» հաղորդաշարն անդրադարձավ թրաֆիքինգի թեմային: «Ժամանման վայրն անհայտ է» խորագիրը կրող հաղորդմանը հրավիրված էին ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով միջգերատեսչական աշխատանքային խմբի ղեկավար Վահրամ Կաթոյանը, աշխատանքային խմբի անդամներ Արզուման Հարությունյանը, Օվսաննա Բաբայանը, «Հայ տուր» տուրիստական գործակալության տնօրեն Մարիամ Իգիթյանը, «Հրապարակ» թերթի լրագրող Սյուզան Սիմոնյանը, Հ.Հ. Փաստաբանների պալատի փաստաբան Մարինե Թովմասյանը, Հ.Հ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխ.վարչ. թրաֆիքինգի դեմ պայքարի բաժնի պետ Ռոբերտ Գրիգորյանը:</p>	
30.	<p>Մշտապես թարմացնել <a href="http://www.antitrafficking.am">www.antitrafficking.am</a> կայքը, դրանում զետեղված՝ հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարն արտացոլող նյութերը</p>	<p><b>«Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա» ՀԿ</b></p> <p><a href="http://www.antitrafficking.am">www.antitrafficking.am</a> կայքը մշտապես թարմացվում է նոր նյութերով, որոնք անդրադառնում են Հայաստանում և արտերկրում թրաֆիքինգին վերաբերող իրադարձություններին:</p> <p>Կայքում տեղադրվել են դատական նիստերի, գործընկեր պետական կառույցների և ՀԿ-ների միջաջառումները լուսաբանող նյութեր:</p> <p>Կայքը ներկայումս վերափոխվում է ԱՄՆ պետքարտուղարության կողմից ֆինանսավորվող “Հայաստանում թրաֆիքինգի դեմ պայքարի տեղեկատվական պլատֆորմի զարգացում” ծրագրի շրջանակներում:</p>	
31.	<p>Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերի վերաբերյալ լրագրողների</p>	<p><b><u>ՀՀ տարածաբային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն</u></b></p>	

<p>իրազեկության բարձրացման, այդ երևույթի մասին մատուցվող տեղեկատվության էթիկական և մասնագիտական մոտեցումների կազմավորման նպատակով կազմակերպել քննարկումներ վարքականոնների օգտագործման և լուսաբանման առանձնահատկությունների վերաբերյալ</p>	<p>2013թ. մայիսի 8-ին կազմակերպվել է «Հայաստանից դեպի Բելգիա ուղղվող անկանոն միգրացիայի կանխարգելում՝ պոտենցիալ միգրանտների շրջանում իրազեկվածության բարձրացման միջոցով» ծրագրի շրջանակներում ՁԼՄ-ների, հասարակական և խնդրով հետաքրքրված այլ կազմակերպությունների ներկայացուցիչների համար անցկացված կլոր սեղան, թեման՝ օգտակար տեղեկություններ Բելգիա մեկնողների համար և ՀՀ-ԵՄ վիզային ռեժիմի ազատականացման մասին համաձայնագիրը:</p> <p><b>«Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա» ՀԿ</b></p> <p>Կազմակերպությունը սկսեց իրականացնել «Հայաստանն ընդդեմ թրաֆիքինգի տեղեկատվական պլատֆորմի զարգացում» ծրագիրը: Ծրագիրը ֆինանսավորվում է ԱՄՆ քարտուղարության կողմից և տևելու է մինչև 2014-ը թվականի օգոստոսի 11-ը: Ծրագրի հիմնական նպատակը լրագրողների՝ թրաֆիքինգի մասին իրազեկության բարձրացումն է:</p> <p>Աշխատանքային խումբն իրականացրեց ՀՀ տասը մարզերի լրագրողների համար մասնագիտական սեմինարների փուլը:</p> <p>Սահմանվեց լրագրողական պլատֆորմ հասկացությունն ու նպատակները: Լրագրողական պլատֆորմը մի հարթակ է, որը հնարավորություն է տալիս լրագրողներին օգտվել տեղեկատվական և փորձագիտական ռեսուրսներից, միավորվել խնդրի շուրջ և հասնել խնդրի կանխարգելմանը:</p> <p>Ստեղծվեց «Լրագրողներն ընդդեմ թրաֆիքինգի» ֆեյսբուքյան էջը, որի միջոցով էլ առանձնացվեցին լրագրողական պլատֆորմի հետևյալ նպատակները.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Միավորվեցին տեղի բոլոր լրագրողները,</li> <li>2. Մշտական կապ հաստատվեց նրանց հետ,</li> <li>3. Տեղեկացվեցին թրաֆիքինգին վերաբերող դատական նիստերի և տարբեր միջոցառումների մասին,</li> <li>4. Խորախուսվեց նրանց մասնակցությունը վերը նշվածներին,</li> <li>5. Վերլուծության ենթարկվեցին լրագրողների կողմից գրված հոդվածները՝ դրանով նպաստելով նրանց նյութերի որակի բարձրացմանը,</li> <li>6. Ստեղծվեց լրագրողական մի խումբ, որի վրա կարելի է հենվել՝ ակնկալելով, որ այս ոլորտն ինչպես հարկն է կլուսաբանվի:</li> <li>7. Մշակվեցին նպատակներին հասնելու ռազմավարությունը,</li> </ol>	
---	--	--

		<p>գործողությունների պլանը,        8. Հանդիպումներ կազմակերպվեցին, որոնց ժամանակ կրկին փորձ արվեց նրանց ոգևորել և ակտիվացնել:</p>	
32.	<p>Անցկացնել ամենամյա մրցանակաբաշխություն՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) երևույթի և դրա դեմ պայքարի վերաբերյալ լավագույն լրագրողական լուսաբանման համար</p>	<p>Թրաֆիքինգի և դրա դեմ պայքարի լուսաբանման մրցանակաբաշխությունը տեղի ունեցավ ս.թ. հունիսի 6-ին՝ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի նիստերի դահլիճում: Միջոցառմանը ներկա էին ՀՀ փոխվարչապետ, ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդի նախագահ Արմեն Գևորգյանը, Արտաքին գործերի նախարարի տեղակալ Աշոտ Հովակիմյանը, ՀՀ ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության պետ, ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի ղեկավար Վահրամ Կաժոյանը, աշխատանքային խմբի անդամները, միջազգային և հասարակական կազմակերպությունների, Հայաստանում ԱՄՆ դեսպանատան ներկայացուցիչներ: Մրցույթը հայտարարվել էր ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդի կողմից՝ խրախուսելու համար այն լրագրողներին և հեղինակներին, ովքեր իրենց աշխատանքներում անդրադառնում են այդ երևույթին, հանրությանը տեղեկացնում դրա բացասական ազդեցությունների մասին, մատնացույց անում ելքերը:</p> <p>Մասնագիտական ժյուրիի որոշմամբ՝ "Հեռուստատեսություն և ռադիո" անվանակարգում առաջին տեղին է արժանացել «Ազատություն» ռադիոկայանի լրագրող Անուշ Մկրտչյանը՝ "Թող հավատան, որ կյանքը սրանով չի ավարտվում" ռադիոնյութի համար, նույն անվանակարգում երկրորդ և երրորդ տեղերը համապատասխանաբար զբաղեցրել են հեղինակներ Դիանա Ավետիսյանը՝ "Սոցիալական ցանցերը կարող են դառնալ թրաֆիքինգի ցանցեր" և Անի Մանուկյանը՝ "Ստրկությունից մինչև թրաֆիքինգ" տեսանյութերի համար, որոնք ցուցադրվել են "Արմենիա" հեռուստաընկերությամբ:</p> <p>"Տպագիր և առցանց լրատվամիջոցներ" անվանակարգում երկրորդ տեղն է զբաղեցրել լրագրող Վահան Իշխանյանը՝ "Հայաստան. ստրկությունը 21-րդ դարում կամ թրաֆիքինգ" հրապարակման համար, երրորդ մրցանակային տեղին արժանացել է "Երկիր" պարբերականի լրագրող Աստղիկ</p>	

		<p>Կարապետյանը՝ "Ուզում եմ թրաֆիքինգի զոհ դառնալ" նյութի համար: Մասնագիտական ժյուրին այս անվանակարգում առաջին տեղ չէր շնորհել: Մրցանակային տեղերի համար սահմանված է նաև դրամական պարգև: Ժյուրիին, որի կազմում ընդգրկվել են լրագրողական չորս կազմակերպությունների ներկայացուցիչներ և թրաֆիքինգի հարցերով երեք փորձագետներ, ներկայացվել էր շուրջ 40 աշխատանք: Անցյալ տարի, երբ մրցանակաբաշխությունն անցկացվում էր առաջին անգամ, ներկայացվել էր շուրջ մեկ տասնյակ աշխատանք: Ըստ կազմակերպիչների՝ սա վկայում է լրագրողական շրջանում թեմայի վերաբերյալ հետաքրքրության աճի մասին: Մրցանակաբաշխության կազմակերպմանը ֆինանսական օժանդակություն էր տրամադրվել ՄԱԿ-ի փախստականների գլխավոր հանձնակատարի երևանյան գրասենյակի կողմից:</p>	
33.	<p>Շարունակել աշխատանքները սահմանային անցակետերում ժամանակավոր պահման կետերի ստեղծման ուղղությամբ</p>	<p><b><u>ՀՀ կառավարության առընթեր ազգային անվտանգության ծառայություն</u></b></p> <p>ՀՀ պետական սահմանի անցման կետերում օտարերկրացիների համար նախատեսված հատուկ կացարան գործում է միայն «Զվարթնոց» ՀԱԿ-ում, սակայն սահմանային անվտանգության և պետական սահմանի համալիր կառավարման ծրագրով մինչև 2015թ. ավարտը նախատեսվում է նաև «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցման կետերում հատուկ կացարանների կառուցումը:</p>	
34.	<p>Շարունակել Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների աշխատանքները՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց նախնական նույնացման, անհրաժեշտ օգնության տրամադրման և նրանց հայրենիք վերադարձի ապահովման ուղղությամբ</p>	<p><b><u>ՀՀ արտաքին գործերի նախարարություն</u></b></p> <p>ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից իրականացվող «Գործողությունների ազգային ծրագրի իրականացման գործում Հայաստանի հակաթրաֆիքինգային ազգային դերակատարների կարողությունների ուժեղացում» ծրագրի օժանդակությամբ մշակվել է «Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հյուպատոսական ծառայության աշխատակիցների համար «Մարդու շահագործումը (թրաֆիքինգը) և դրա դեմ պայքարը» ձեռնարկի նախագիծը:</p> <p>ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն ՀՀ ԱԳՆ աշխատակիցների, մասնավորապես նորանշանակ հյուպատոսների համար 2013 թ. նոյեմբերի 29-ին վերապատրաստման դասընթաց է անցկացվել:</p>	

35.	Առավել արդյունավետ դարձնել սահմանային վերահսկողությունը՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) բացահայտման համար	<p><b><u>ՀՀ կառավարության առընթեր ազգային անվտանգության ծառայություն</u></b></p> <p>ՀՀ պետական սահմանի անցման կետերում ծառայություն իրականացնող անձնակազմի համար մշտապես անցկացվում են որակավորման դասընթացներ՝ թրաֆիքինգի հնարավոր զոհերի հայտնաբերման, նույնականացման և պրոֆիլավորման թեմաներով:</p>	
36.	Մշակել և ներդնել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց նույնացման չափորոշիչները՝ կազմակերպությունների կողմից կիրառման համար	<p><b><u>ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ</u></b></p> <p>Վերանայվել և լրամշակվել են թրաֆիքինգի զոհերի նույնացման ցուցիչները, տրամադրվել են ՀՀ ոստիկանությանը՝ «Թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» օրենքի նախագծում ներառելու/կամ ենթաօրենսդրական կամ այլ ակտով կյանքի կոչելու համար:</p>	
37.	Շարունակել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ուղղորդման կարգի կիրառումը՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց տրամադրելով կարգով սահմանված աջակցությունը, այդ թվում նաև բժշկական, սոցիալական, հոգեբանական, իրավական օգնություն և խորհրդատվություն, ինչպես նաև կազմակերպել նրանց վերականգնողական աշխատանքները	<p><b><u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</u></b></p> <p>Տարվա ընթացքում ապաստարաններ ուղղորդվել են 24 հոգի: Դրանցից 15-ը՝ «ԱՄԲՈՐ»-ի ապաստարան, 9-ը՝ «Հույս և օգնություն» կազմակերպության: Բոլորը ստացել են սոցիալական աջակցություն, իրավաբանական խորհրդատվություն, հոգեբանական օգնություն, աշխատանքներ են տարվել նրանց վերաինտեգրման ուղղությամբ: Զոհերից մեկը տեղափոխվել է ՀՕՖ-ի կենտրոն, հետագայում՝ «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն:</p> <p>Երկուսը սահմանված կարգով ստացել են բուժօգնություն պետպատվերի շրջանակում, դրանցից մեկը հիվանդությամ կրկնակի սրացման պատճառով բուժկենտրոն ուղղորդվել է երկրորդ անգամ:</p> <p><b><u>ՀՀ կառավարության առընթեր ոստիկանություն</u></b></p> <p>Հետագա աջակցություն ստանալու համար իրենց համաձայնությունը տվել և «Ամբոր Հայաստան» և «Հույս և օգնություն» ՀԿ-ներ, ինչպես նաև երեխաների աջակցության «ՀՕՖ»-ի և «Զատիկ» կենտրոններ են ուղղորդվել 15 զոհեր և թրաֆիքինգի ենթարկման վտանգի տակ հայտնված 5 անձ: Նշված անձանցից 10-ը ուղղորդման պահին եղել են անչափահասներ:</p> <p><b><u>ՀՀ առողջապահության նախարարություն</u></b></p> <p>ՀՀ առողջապահության նախարարությունը կազմակերպել է մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված 2 անձանց բժշկական օգնություն</p>	<p><b><u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</u></b></p> <p>Մեկ շահառուի ս.թ. մայիսին Մարալիկի սոցիալական բնակարանային համալիրից տրամադրվել է բնակարան:</p>

		<p>և սպասարկում պետական պատվերի շրջանակներում, տրամադրելով 4 ուղեգիր:</p> <p><b><u>ԱՄՔՈՐ ՀԿ Հայաստանյան մասնաճյուղ</u></b></p> <p>Թրաֆիքինգի զոհերին աջակցության տրամադրելու նպատակով գործում է ապաստարան, որտեղ զոհերը բնակվում են անվտանգ պայմաններում (ցանկացած ժամանակահատվածով) և ստանում են անհրաժեշտ բժշկական, հոգեբանական, սոցիալական, իրավաբանական և այլ աջակցություն: Այն դեպքում երբ զոհը չի ցանկանում մնալ ապաստարանում, նրան նույնպես տրամադրվում է աջակցության ամբողջական փաթեթ:</p> <p>Ս.թ. հունվարից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում աջակցություն են ստացել 29 զոհ /ապաստարանի օժանդակությամբ՝ 15 թրաֆիքինգի զոհ, որոնցից 11-ը ուղղորդվել են 2013 թ.-ին և ապաստարանից դուրս՝ 14 թրաֆիքինգի զոհ, որոնցից 4-ը նույնպես ուղղորդվել են 2013 թ.-ին/:</p> <p><b><u>Հույս և Օգնություն ՀԿ</u></b></p> <p>2013թ.-ին «Հույս և Օգնություն» ՀԿ-ի թվով ինը թրաֆիքինգի նույնացված զոհեր ստացել են իրավաբանի, հոգեբանի, սոցիալական աշխատողի և բժշկի աջակցություն ըստ առկա կարիքների և խնդիրների:</p> <p>Իրավաբանական խորհրդատվություն և շահերի պաշտպանություն է ստացել թվով յոթ շահառու, առողջապահական աջակցություն են ստացել վեցը, հոգեբանի և սոցիալական աշխատողների կողմից աջակցություն են ստացել բոլոր ինը շահառուները:</p>	<p><b><u>ԱՄՔՈՐ ՀԿ Հայաստանյան մասնաճյուղ</u></b></p> <p>ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի 10 բաժնի, 09 խմբի, 02 դասի «14. «Թրաֆիքինգի զոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ» ծրագրով նախատեսված միջոցների շրջանակներում ԱՄՔՈՐ-ի և ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև կնքված է պայմանագիր, որի հիման վրա ԱՄՔՈՐ-ը յուրաքանչյուր ամիս նախարարությանն է ներկայացնում ֆինանսական</p>
--	--	--	--

			հաշվետվություն՝ ապաստարանի ծախսերի մասով:
38.	Մշակել առաջարկություններ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց համար փոխհատուցման համակարգի ստեղծման հնարավորության վերաբերյալ	<p><b><u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</u></b></p> <p>Մշակվել է «Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերին միանվագ դրամական փոխհատուցման նշանակման և տրամադրման» կարգը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ: Նախագիծը շրջանառվել է և առաջիկայում կներկայացվի ՀՀ-ում մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ հարցերով խորհրդին:</p> <p><b><u>ՀՀ ֆինանսների նախարարություն</u></b></p> <p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակված և ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի N 01/19/5762-13 գրությամբ շրջանառված «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերին միանվագ դրամական փոխհատուցման նշանակման և տրամադրման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծն ուսումնասիրվել է նախարարության կողմից և վերջինս լրամշակելու վերաբերյալ 2013 թվականի հոկտեմբերի 24-ի N 1/4.3-1/16037-13 գրությամբ բերվել են մի շարք առաջարկություններ:</p>	
39.	Աշխատանքներ իրականացնել Հայաստանի Հանրապետության իրավապահ համակարգում դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունն ապահովող առանձին մասնագիտացված ստորաբաժանում ստեղծելու ուղղությամբ	<p><b><u>ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն</u></b></p> <p>Աշխատանքներ են իրականացվել Հայաստանի Հանրապետության իրավապահ համակարգում դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունն ապահովող առանձին մասնագիտացված ստորաբաժանում ստեղծելու ուղղությամբ, մասնավորապես՝ մշակվել է «Ոստիկանական պահպանության մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նախագծի վերջնական տարբերակը ներկայումս գտնվում է ՀՀ Կառավարությունում և մոտ ապագայում կներկայացվի ՀՀ Ազգային ժողով:</p>	
40.	Մշակել և ներդնել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց մատուցվող անհրաժեշտ	<p><b><u>ԱՄՔՈՐ ՀԿ Հայաստանյան մասնաճյուղ</u></b></p> <p>Կազմակերպվել է կլոր սեղան քննարկում « Զոհերի աջակցության և վերաինտեգրման գործընթացի որակի գնահատման չափորոշիչների</p>	

	<p>ծառայությունների նվազագույն չափորոշիչներ</p>	<p>մշակում» թեմայով: Աշխատանքային խումբը վերլուծելով քննարկման արդյունքները շարունակում է վերը նշված չափանիշների մշակման աշխատանքները:</p>	
<p>41.</p>	<p>Տեղեկատվության տարածում հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց տրամադրվող սոցիալական աջակցության, զբաղվածության և առողջապահական անվճար ծառայությունների մասին</p>	<p><b>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</b>  ՀՀ ԱՍՀ նախարարության «Սոցիալական երկխոսության ժամ» հողորդաշարի շրջանակում նախապատրաստվել է թրաֆիքինգի խնդիրներին նվիրված հեռուստահաղորդում, որին մասնակցել են ՀՀ ԱՍՀՆ, ՀՀ ոստիկանության և ԱԲՔՈՐ կազմակերպության ներկայացուցիչները: Հաղորդումը եթեր է արձակվել 2013 թվականի նոյեմբերին «Կենտրոն» հեռուստաալիքով:</p>	
<p>42.</p>	<p>Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի ոլորտում լայնորեն համագործակցել միջազգային, տարածաշրջանային, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների հետ</p>	<p>Հայաստանը շարունակում է սերտ համագործակցությունը Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի ոլորտում միջազգային, տարածաշրջանային, ինչպես նաև երկկողմ մակարդակով: 2013 թվականի հունիսի 20-ին ԱՄՆ պետքարտուղարությունը հրապարակեց մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վերաբերյալ 2012 թվականի տարեկան զեկույցը, որում անդրադարձ է արվում աշխարհի տարբեր երկրներում ստեղծված իրավիճակին և այս հանցագործության մնկատմամբ համապատասխան արձագանքին: Վերոհիշյալից ելնելով երկրները դասվում են տարբեր խմբերի: Զեկույցի համաձայն, Հայաստանը առաջին անգամ դասվել է 1-րդ խմբում (Հայաստանը մեր տարածաշրջանի, ինչպես նաև ԱՊՀ միակ երկիրն է, որը գտնվում է 1-ին խմբում): Զեկույցում մասնավորապես ասվում է. «Հայաստանի կառավարության կողմից ձեռնարկված քայլերը ամբողջությամբ համապատասխանում են թրաֆիքինգի վերացման նվազագույն չափանիշներին: 2012 թվականին կատարելագործվել են իրավապահ մարմինների, ինչպես նաև պաշտպանությանն ուղղված աշխատանքները, Հայաստանի պաշտոնյաները ամուր գործընկերային հարաբերություններ են ունեցել քաղաքացիական հասարակության հետ, շարունակվել են ուսուցումները հարյուրավոր պետական աշխատողների համար, ՀՀ կառավարությունը շարունակել է ներդրումներ կատարել թրաֆիքինգի զոհերի կացարանի համար և ձեռնարկել է մեծ ջանքեր թրաֆիքինգի կանխարգելման</p>	



	<p>ուղղությամբ»:</p> <p>Երկրների առաջին խմբում Հայաստանի ներառումը ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանի կողմից ղեկավարվող ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդի կազմում և ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից համակարգվող խորհրդին կից աշխատանքային խմբում ընդգրկված պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների և միջազգային գործընկերների վերջին տարիների շարունակական և հետևողական աշխատանքի, իրականացված լուրջ բարեփոխումների և սերտ համագործակցության արդյունք է:</p> <p>Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի ոլորտում ընդգրկված հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները, ինչպես նաև սոցիալական գործընկերները շարունակում են ակտիվ մասնակցել Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդի և աշխատանքային խմբի աշխատանքներին:</p> <p>ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար, Հայաստանում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդի նախագահ Արմեն Գևորգյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցեց մայիսի 13-14-ին Նյու Յորքում կայացած ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բարձր մակարդակի հանդիպման նիստին, որի նպատակն է գնահատել 2010թ-ին ընդունված Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի ՄԱԿ-ի գլոբալ գործողությունների ծրագրի իրականացման առաջընթացը: Նիստի ընթացքում ՀՀ փոխվարչապետը հանդես եկավ ելույթով՝ ներկայացնելով Հայաստանում թրաֆիքինգի դեմ պայքարի ուղղությամբ վերջին տարիներին կատարված աշխատանքները:</p> <p>Այցի շրջանակում փոխվարչապետը հանդիպեց ԱՄՆ պետքարտուղարության մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի և մոնիտորինգի գրասենյակի ղեկավար, հատուկ հանձնարարություններով դեսպան Լուիս Սի դե Բակայի (Luis C de Baca) հետ:</p> <p>Զրուցակիցները քննարկեցին թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում համագործակցության, Հայաստանի կողմից իրականացվող</p>	
--	--	--

	<p>աշխատանքներին վերաբերող հարցեր:</p> <p>Պատվիրակության կազմում ընդգրկված էին ՀՀ ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության պետ, ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի ղեկավար Վահրամ Կաժոյանը և ՀՀ տարածքային կառավարման նախարարի խորհրդական Սուրեն Ամիրբեկյանը:</p> <p>Ս.թ. հունիսի 25-ից 26-ը ՀՀ ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության պետ, ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի ղեկավար Վահրամ Կաժոյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցել են Վիեննայում կայացած Թրաֆիքինգի դեմ պայքարի դաշինքի ազգային համակարգողների 13-րդ համաժողովի աշխատանքներին: Համաժողովի ընթացքում պատվիրակության ղեկավարը հանդես եկավ ելույթով՝ ներկայացնելով ՀՀ իշխանությունների կողմից թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում իրականացվող քայլերը: Մասնավորապես շեշտվեց, որ ՀՀ իշխանությունները խիստ կարևորում են թրաֆիքինգի հանցագործությունից տուժած զոհերի իրավունքների լիակատար պաշտպանությունը և նրանց առանց նախապայմանների հնարավորինս լայն օժանդակության տրամադրումը: Այդ իսկ պատճառով Հայաստանում իրականացվող բոլոր նախաձեռնությունները կրում են զոհակենտրոն բնույթ:</p> <p>Համաժողովի շրջանակներում ՀՀ պատվիրակությունը հանդիպում ունեցավ նաև Եվրոպայի խորհրդի Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին կոնվենցիայի գործադիր քարտուղար Պետյա Նեստորովայի հետ: Հանդիպման ընթացքում Վ. Կաժոյանը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության կողմից մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի կիրառման վերաբերյալ ԵԽ փորձագիտական խմբի (ԳՐԵՏԱ) առաջին զեկույցում ներառված առաջարկների<sup>1</sup> ուղղությամբ իրականացվելիք և նախատեսվող գործողությունները:</p>	
--	--	--

<sup>1</sup> Զեկույցը հրապարակվել է 2012 թվականի սեպտեմբերի 21-ին և ՀՀ իշխանությունների մեկնաբանությունների հետ մեկտեղ տեղադրված է Եվրոպայի խորհրդի պաշտոնական կայքէջում (<http://www.coe.int/trafficking>).

		<p>2013 թ. մայիսի 21-22-ը Վարչապայում՝ «Միգրացիայի և ապաստանի հարցերով արևելյան գործընկերություն» հարթակի շրջանակներում կայացել է փորձագիտական սեմինար նվիրված մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի հիմնախնդիրներին:</p> <p>Հայաստանի Հանրապետությունը հանդես է եկել որպես այս միջոցառման համակազմակերպիչ: Սեմինարին մասնակցել և ելույթով հանդես են եկել ՀՀ ոստիկանության և ԱՄԲՈՐ -ի ներկայացուցիչները:</p> <p>2013թ. սեպտեմբերի 17-ին Ստրասբուրգում ՀՀ ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության պետ Վահրամ Կաժոյանը հանդիպում է ունեցել ԵԽ փորձագիտական խմբի (ԳՐԵՏԱ)-ի համակարգողների հետ, որի ընթացքում հաշվետվություն-զեկույց ներկայացրեց վերջին 3 տարիների ընթացքում ՀՀ իշխանությունների կողմից թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում իրականացված քայլերի վերաբերյալ: Նույն օրը Վ. Կաժոյանը հանդիպում ունեցավ նաև Եվրոպայի խորհրդի Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին կոնվենցիայի գործադիր քարտուղար Պետյա Նեստորովայի հետ:</p> <p>2013թ. նոյեմբերի 26-27-ը Վարչապայում ՀՀ ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության պետ Վահրամ Կաժոյանը մասնակցել է “Զոհերը առաջնային են՝ թրաֆիքինգի զոհերի պաշտպանություն և առակցություն” համաժողովին, որի նպատակ էր թրաֆիքինգի դեմ պայքարում փորձի փոխանակումը մասնակից երկրների միջև, ինչպես նաև զոհերի պաշտպանությանն ուղղված պարտավորությունների պարզաբանումների ներկայացումը:</p> <p>2013թ. դեկտեմբերի 4-ից 6-ը ՀՀ ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության պետ Վահրամ Կաժոյանը, որպես ԹԱԽ ղեկավար և մարդու իրավունքների բաժնի աշխատակիցը մասնակցել են Թբիլիսիում տեղի ունեցած Միգրացիայի միջազգային կազմակերպության Հայաստանյան առաքելության կողմից կազմակերպված «Թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկման ամրապնդումը կրթության միջոցով Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում» տարածաշրջանային կոնֆերանսին, որի նպատակն էր ծրագրի արդյունքների և ձեռքբերումների ներկայացումը, ինչպես նաև հետագա գործողությունների քննարկումը :</p>	
--	--	--	--

		<p>2013 թ. դեկտեմբերի 19-ին ՀՀ ԱԳՆ նախաձեռնությամբ և ԵՄ աջակցությամբ կայացավ կլոր սեղան, որը հրավիրվել էր քննարկելու «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի» ԵՄ կոնվենցիայի դրույթների Հայաստանի կողմից կատարման ընթացքը՝ ԵՄ Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի փորձագիտական խմբի (ԳՐԵՏԱ-ի) և Կողմերի կոմիտեի կողմից արված առաջարկների լույսի ներքո: Հանդիպումը վարեց ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության պետ, Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի ղեկավար Վահրամ Կաժոյանը: Հանդիպման ընթացքում մասնավորապես քննարկվեց մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարին ուղղությամբ ՀՀ-ում իրականացվող աշխատանքները 4 հարթությունների ներքո, որոնք են՝ կանխարգելում, զոհերի իրավունքների պաշտպանություն ու աջակցություն, հանցագործների հետապնդում և համագործակցություն: Քննարկվեցին նաև «Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» օրենքի և Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց համար փոխհատուցման տրամադրման կարգի նախագծերը: Հանդիպման ավարտին մասնակիցները առաջարկություններ ներկայացրեցին Հայաստան-ԳՐԵՏԱ համագործակցության հետագա ծավալման վերաբերյալ: ԶԼՄ-ների հետ համագործակցության մասին տես նաև կետ 29</p>	
43.	<p>Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ արդյունավետ պայքարի նպատակով ընդլայնել և բարելավել համագործակցությունը օտարերկրյա իրավապահ մարմինների ու մասնագիտացված միջազգային կազմակերպությունների և դիվանագիտական հաստատությունների հետ</p>	<p><b>ՀՀ ոստիկանություն</b>  ՀՀ-ում Ինտերպոլի ԱԿԲ է այցելել ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանատան անվտանգության կցորդը, որի հետ քննարկումներ են անցկացվել մարդկանց շահագործման դեմ ուղղված պայքարի ոլորտում իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Նշված ոլորտում ընթացիկ գործերով անհրաժեշտ միջոցառումներ իրականացնելու նպատակով հաշվետու ժամանակաշրջանում փոխհամագործակցությունն առավել ինտենսիվ իրականացվել է Թուրքիայի, ԱՄԷ-ի, ՌԴ-ի և Բելգիայի ԱԿԲ-ների հետ:</p> <p><b>ՀՀ ԱԱԾ</b>  ՀՀ ԱԱԾ աշխատակիցները մասնակցել են Արևելյան գործընկերության</p>	

		<p>FLAGSHIP ծրագրի շրջանակներում միգրացիոն քաղաքականության զարգացման միջազգային կենտրոնի (ICMPD) կողմից 2013թ. հունվար և մարտ ամիսներին համապատասխանաբար Կիև և Թբիլիսի քաղաքներում անցկացված «Կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ իրավապահ գերատեսչությունների իրազեկության բարձրացումը» և «Մարդկանց առևտրի դեմ պայքարի» թեմաներյով տարածաշրջանային սեմինարներին:</p> <p>ՀՀ ԱԱԾ աշխատակիցը ս. թ. դեկտեմբերին Մինսկում մասնակցել է իրավապահ մարմինների աշխատակիցների համար կազմակերպված «Հակաթրաֆիքինգ և մարդու իրավունքը» ուսումնական դասընթացին:</p> <p>ՀՀ ԱԱԾ կողմից քննակրվել են «2014-2018 թթ. ընթացքում մարդկանց ծահագործման դեմ պայքարի ուղղությամբ ԱՊՀ անդամ պետությունների համագործակցության ծրագրի» նախագիծը, ինչպես նաև Եվրոպական հանձնաժողովի կողմից ընդունված «Մարդկանց շահագործման/թրաֆիքինգի/ դեմ պայքարի 2012-2016 թ.թ. ԵՄ ռազմավարությունը» ու դրա վերաբերյալ համառոտ տեղեկանքը: Նշված ծրագրի նախագծի և ռազմավարության քննարկման արդյունքների վերաբերյալ տեղեկատվություններ են տրամադրվել ՀՀ ոստիկանությանը և ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը:</p>	
44.	<p>Ուսումնասիրել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի)՝ հատկապես աշխատանքային թրաֆիքինգի չափերի և բնութագրերի վերաբերյալ հետազոտության մեթոդաբանության միջազգային փորձը և քննարկել Հայաստանի Հանրապետությունում դրանց կիրառման հնարավորությունը</p>	<p><b><u>ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ</u></b></p> <p>ԱՄՆ Պետքարտուղարության առաջարկությամբ և ֆինանսավորմամբ մշակվել է «Հարկադիր աշխատանքի խոցելիության տարածվածությունը Հայաստանի Հանրապետությունում» ծրագիրը, որն իրականացվելու է 2014-2015 թ.թ. ընթացքում:</p>	<p>Ծրագիրը մշակվել է ԵԱՀԿ Երևանի գրասենյակի կողմից</p>
45.	<p>Պահպանել և կատարելագործել մարդկանց շահագործմանը (թրաֆիքինգին) ենթարկված և մարդկանց շահագործում (թրաֆիքինգ) կատարած անձանց տեղեկատվական համակարգերը և դրանց հիման վրա իրականացնել</p>	<p><b><u>«Աուդիո-վիզուալ լրագրողների ասոցիացիա» ՀԿ</u></b></p> <p>«Աուդիո-վիզուալ լրագրողների ասոցիացիա» ՀԿ-ն ինչպես ամեն տարի, այս տարի ևս հետևել է թրաֆիքինգի թեմայով մամուլում տեղ գտած հնարավոր լուսաբանումներին և կատարել համապատասխան վերլուծություն: Թեմային ոչ ճշգրիտ անդրադարձի դեպքում փորձագետների հետ համատեղ հայտնել է իր դիտարկումները և որպես</p>	<p><b><u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</u></b></p> <p>Քանի որ տարեկան տեղեկատվությունը</p>

	<p>վերլուծություն (ներառելով սեռը, տարիքը, շահագործման ձևը, ծագման/նպատակակետ երկիրը և այլն)</p>	<p>հաջորդող գործողություն այդ լրատվամիջոցին ուղարկել համապատասխան դիտարկումներով նամակ: ՀԿ-ն իր առջև խնդիր է դրել թրաֆիքինգ լուսաբանող հայ լրագրողի մասնագիտական թերությունները շտկելու և տեղեկատվական գրագետ ու պրոֆեսիոնալ հարթակ ստեղծելու: Ուստի, մշտապես ապահովում է երևույթը լուսաբանող լրագրողին անհրաժեշտ ցանկացած տեղեկատվությամբ, ինչպես նաև վերապատրաստում այն լրագրողին, ով ցանկություն ունի թեմային անդրադառնալու:</p>	<p>հավաքագրվում և ամփոփվում է յուրաքանչյուր հաջորդ տարվա հունվար ամսին, վերջնական տեղեկատվությունը /մասամբ ներկայացված նաև կետ 37-ում/ կտրամադրվի լրացուցիչ ս.թ. հունվարի վերջին:</p>
<p>46.</p>	<p>Պարբերաբար ուսումնասիրություններ անցկացնել ՀՀ ՋՈՒ հարկադիր աշխատանքի հնարավոր դեպքերի բացահայտման, դրանց տարածվածության աստիճանի, ծնող պատճառների հայտնաբերման նպատակով և կանխարգելման նպատակով քայլեր ձեռնարկել այդ երևույթի ու դրա բացասական հետևանքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման ուղղությամբ</p>	<p><b><u>ՀՀ պաշտպանության նախարարություն</u></b>          ՀՀ ՋՈՒ-ում զինծառայողներին հարկադիր աշխատանքի հնարավոր դեպքերը կանխելու նպատակով Ռազմական ոստիկանության կողմից իրականացվել են պրոֆալակտիկ-դաստիարակչական, օպերատիվ-հետախուզական հետևողական աշխատանքներ, մշտական հսկողություն է սահմանվել զինծառայողների օրվա կարգացուցակի պահպանման և կատարման նկատմամբ՝ բացառելու զինծառայողներին ծառայությունից դուրս այլ աշխատանքներում ներգրավելու դեպքերը: Զորամասերի հրամանատարության կողմից համատեղ մշակվել է համապատասխան միջոցառումների պլան, որով իրականացվում են նպատակային աշխատանքներ:</p>	
<p>47.</p>	<p>Իրականացնել սույն ծրագրի կատարման միջանկյալ (տարեկան) և վերջնական (եռամյա) մշտադիտարկում</p>		<p>Սույն ծրագրի միջանկյալ առաջին մշտադիտարկումը կիրականացվի 2014 թ. փետրվարին:</p>

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի N 1 հավելվածով մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գծով նախատեսված հատկացումների և ծախսերի ֆինանսավորման վերաբերյալ՝ ըստ ծախսային ծրագրերի և դրանք իրականացնող ՀՀ պետական կառավարման մարմինների

h/h	Բաժին	խումբ	դաս	Ծախսային ծրագրերի և այն կատարող ՀՀ պետական կառավարման մարմինների անվանումները	Ճշտված բյուջեն	ֆինանսավորումը տարեկան (հազար դրամ)	Կատարման %-ը
				<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>63 270,7</b>	<b>57 022,9</b>	<b>90,1</b>
				<b>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</b>	<b>39 770,7</b>	<b>35 722,9</b>	<b>89,8</b>
1	10	04	01	ՀՀ մանկատների շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն	29 580,7	27 052,9	91,5
2	10	04	01	ՀՀ մանկատների շրջանավարտներին կրթաթոշակի և միանվագ դրամական օգնության տրամադրում	2 800,0	1 280,0	45,7
3	10	09	02	Հանրային իրազեկման միջոցառումների իրականացում ծրագրի շրջանակներում	766,0	766,0	100,0
4	10	09	02	Թրաֆիքինգի զոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ	6 624,0	6 624,0	100,0
				<b>ՀՀ առողջապահության նախարարություն</b>	<b>2 200,0</b>	<b>-</b>	
5	07	03	02	Թրաֆիքինգի զոհերին բժշկական օգնության ծառայություններ	2 200,0	-	
				<b>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</b>	<b>8 000,0</b>	<b>8 000,0</b>	<b>100,0</b>
6	08	04	01	Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելմանն ուղղված քարոզչական միջոցառումներ	8 000,0	8 000,0	100,0
				<b>ՀՀ դատախազություն</b>	<b>13 300,0</b>	<b>13 300,0</b>	<b>100,0</b>
7	09	05	02	Վերապատրաստման ծառայություններ	13 300,0	13 300,0	100,0

**ՀՀ Ոստիկանություն**

**ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ և 132<sup>2</sup>-րդ հոդվածներ՝ «Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը» և «Երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգը կամ շահագործումը»**

2013թ. ընթացքում մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման հատկանիշներով հարուցվել է 17 քրեական գործ, որոնցից 4-ը՝ նախկինում հարուցված և 2013թ. փոխանցված գործեր են, 2-ը՝ վերսկսվել է նոր հանգամանքների ի հայտ գալու կապակցությամբ, 11 գործերը՝ հարուցվել են 2013թ.-ին:

2013 թ. ընթացքում հարուցված 11 գործերից 4-ը՝ վերաբերել են չափահաս կանանց պոռնկության շահագործմանը, 2-ը անչափահասների պոռնկության շահագործմանը, 3-ը ՀՀ-ում չափահասի և անչափահասների աշխատանքային շահագործմանը՝ մուրացկանության մեջ ներգրավելու միջոցով, 1-ը՝ մարդու օրգանները կամ հյուսվածքները վերցնելուն, 1-ը՝ չափահաս կնոջ ԱՄԷ-ում պոռնկության և աշխատանքային շահագործմանը: Պոռնկության շահագործման 7 գործերից 4-ը ներքին թրաֆիքինգի կամ շահագործման դեպքերին առնչվող գործեր են, 3-ով շահագործումը իրականացվել է ԱՄԷ-ում:

2013 թ. հարուցված գործերով հայտնաբերվել և տուժող են ճանաչվել՝ 19 անձինք, որոնցից 13-ը կանայք: Նշված 19 անձանցից 11-ը՝ հանցագործության կատարման ընթացքում եղել են անչափահաս:

Շտապ աջակցություն ստանալու համար իրենց համաձայնությունը տվել և «Ամբողջ Հայաստան» և «Հույս և օգնություն» ՀԿ-ներ, ինչպես նաև երեխաների աջակցության «ՀՕՖ»-ի և «Ձատիկ» կենտրոններ են ուղղորդվել 15 զոհեր և թրաֆիքինգի ենթարկման վտանգի տակ հայտնված 5 անձ: Նշված անձանցից 10-ը ուղղորդման պահին եղել են անչափահասներ:

2013 թ. ընթացքում նոր մեղադրյալները թվով 10-ն են:

2013 թ. ընթացքում վարույթ իրականացված քրեական 17 գործերից 7-ը ուղարկվել են դատարան, 4 -ը գտնվում են քննության ընթացքում, 2-ը կասեցվել է, 2 գործ վերավորակվել են ՀՀ քր. օր-ի 262-րդ հոդվածի և ուղարկվել է դատարան, 1 գործի վարույթը կարճվել է՝ գործի նյութերով հարուցվել է նոր քրեական գործ ՀՀ քր. օր-ի 262-րդ հոդվածի հատկանիշներով, 1 գործի վարույթը կարճվել է:

2013թ. ընթացում 132, 132 <sup>2</sup> նոր հարուցված քր. գործեր					
Քր. գործ	Նոր զոհ	Նոր մեղադրյալ	Սկզբնաղբյուր երկիր	Վերջնակետ երկիր	Շահագործման ձևը
11	19 կին-13 Անչափահաս աս -11	10 որից կին-7	ՀՀ	ՀՀ ԱՄԷ ԱՄԷ ՀՀ	Պոռնկություն Պոռնկություն Աշխատանքային Մուրացկանություն



01.01.2013թ. դրությամբ հետախուզման մեջ են գտնվել **13** անձինք, 2013թ. ընթացքում հետախուզման մեջ գտնվող անձ չի հայտնաբերվել, հետախուզում է հայտարարվել 2 անձի նկատմամբ: 31.12.2013թ. դրությամբ ՀՀ քր. օր.-ի 132-րդ և 132.2-րդ հոդվածի հատկանիշներով հանցագործություն կատարելու համար հետախուզման մեջ են գտնվում թվով **15** անձինք:

<b>2013թ. ընթացքում ՀՀ քր. օր.-ի 132 հոդվածով հետախուզվողներ</b>			
01.01.2013թ. դրությամբ	2013թ. հայտարարվել է	2013թ. հայտնաբերվել է	31.12.2013թ. դրությամբ
<b>13</b>	<b>2</b>	<b>0</b>	<b>15</b>

**ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ և 166.1 հոդվածներ՝ «Երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը» և «Երեխային ոգելից խմիչքների օգտագործմանը, ուժեղ ներգործող կամ այլ թմրեցնող նյութերի ոչ բժշկական օգտագործմանը, թափառաշրջիկությանը ներգրավելը կամ մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը»**

2013թ. ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի՝ անչափահասին պոռնկության հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելու հատկանիշներով վարույթ է իրականացվել 2012թ. հարուցված **1** գործով: Բացի այդ 2013թ. ընթացքում **1** քրեական գործ է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 166.1-րդ հոդվածի՝ անչափահասին մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը, հատկանիշներով:

**ՀՀ քրեական օրենսգրքի 168-րդ հոդված՝ «Խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքը»**

2013թ. ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 168-րդ հոդվածի հատկանիշներով վարույթ է իրականացվել **3** քրեական գործերով, որոնցից **1-ը** 2012թ. հարուցված և 2013թ. փախանցված, իսկ **2-ը՝** 2013թ. հարուցված քրեական գործեր են:

**ՀՀ քրեական օրենսգրքի 261-րդ, 262-րդ հոդվածներ «Շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը» և «Պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը»**

2013թ. ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 261-րդ, 262-րդ հոդվածների հատկանիշներով հարուցվել են քրեական **31** նոր գործեր, որոնցով բացահայտվել են հանցագործության **47** դեպքեր: Նշված գործերից մեծ մասը վերաբերում է մահճակալներով սննդի օբյեկտների՝ «Հյուրանոցային համալիների» աշխատակիցների կողմից այլ անձանց պոռնկությամբ զբաղվելուն նպաստելուն:

Բացի վերոգրյալը, 2013թ. ընթացքում ՀՀ ոստիկանության կողմից իրականացվել են նաև թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտի բարելավմանն ուղղված մի շարք միջոցառումներ:

«Նուստիկանության տարածքային մարմինների հետ համագործակցության արդյունավետության բարելավման նպատակով մշակվել և հաստատվել է ՀՀ նուստիկանության պետի 22.03.2013թ.-ի թիվ 890-Ա հրամանը, որի համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ, 132.2-րդ, 132.3-րդ, 166-րդ, 168-րդ, 261-րդ, 262-րդ և 263-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների նախականիման, կանխման և բացահայտման ուղղությամբ տարվող աշխատանքների իրականացումը՝ որպես հիմնական գործառույթ, հանձնարարվել է տարածքային մարմինների քրեական հետախուզության ստորաբաժանման փորձառու մեկ ծառայողի:

Ի կատարումն ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Ա.Գևորգյանի 22.06.2013թ. թիվ 01/14/47203-13 հանձնարարականի մշակվել են «Թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում» և «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու ՀՀ օրենքների նախագծերը: Նշված նախագծերը ներկայումս ուղարկվել են ՀՀ Նախագահի աշխատակազմ և մոտ ապագայում կներկայացվեն ՀՀ Ազգային ժողով:

«Նուստիկանության կրթահամալիրում նուստիկանության ծառայողների տարբեր խմբերի՝ ընդհանուր առմամբ շուրջ 340 ծառայողների համար կազմակերպվել են «Թրաֆիքինգի» խնդիրներին վերաբերվող դասընթացներ: Բացի այդ նուստիկանության տարբեր խմբերի 73 ծառայողներ մասնակցել են «Ամբողջ Հայաստան» և «Հույս և օգնություն» ՀԿ-ների կողմից կազմակերպված թրաֆիքինգի խնդիրներին նվիրված դասընթացներին:

Հասարակության իրազեկումը բարձրացնելու նպատակով «02» և «Հերթապահ մաս» հեռուստահաղորդումների շրջանակներում անհատույց հատկացված ժամանակահատվածում պարբերաբար տեսաբանվել են թրաֆիքինգի վերաբերյալ տեսահոլովակները: Մի շարք նյութեր են տրամադրվել նաև զանգվածային լրատվական միջոցներին: Բացի այդ, ԿՀԴՊ գլխավոր վարչությունում վերագործարկվել է թրաֆիքինգի հարցերով անվճար «Թեժ գիծը»: Շարունակվել է police.am կայքէջում առանձին հղումով ստեղծված թրաֆիքինգին վերաբերող հավելվածում թրաֆիքինգի վերաբերյալ համապատասխան նյութերի տեղադրումը:

Նուստիկանության աշխատակիցները ակտիվ մասնակցություն են ունեցել բազմաթիվ տեղական և միջազգային խորհրդաժողովներին, սեմինարներին և հանդիպումներին:

2013-2015 թվականների ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը ՀՀ Կառավարության 28.02.2013թ. թիվ 186-Ն որոշմամբ հաստատվելուց հետո ՀՀ նուստիկանության կողմից մշակվել և հաստատվել է ՀՀ նուստիկանության պետի 15.05.2013թ. թիվ 1469-Ա հրամանը՝ Ծրագրի իրականացման ժամանակացույցով նախատեսված ՀՀ նուստիկանության գործունեության ոլորտին վերաբերող միջոցառումների ցանկը հաստատելու մասին:

Աշխատանքներ են իրականացվել Հայաստանի Հանրապետության իրավապահ համակարգում դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունն ապահովող առանձին մասնագիտացված ստորաբաժանում ստեղծելու ուղղությամբ, մասնավորապես՝ մշակվել է «Նուստիկանական պահպանության մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նախագծի վերջնական տարբերակը ներկայումս գտնվում է ՀՀ Կառավարությունում և մոտ ապագայում կներկայացվի ՀՀ Ազգային ժողով:

**ՀՀ Գլխավոր դատախազություն**

2013 թ. ընթացքում մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման հատկանիշներով հարուցվել է 17 քրեական գործ, որոնցից 4-ը՝ նախկինում հարուցված և 2013 թ. փոխանցված գործեր են, 2-ը՝ վերսկսվել է նոր հանգամանքների ի հայտ գալու կապակցությամբ, 11 գործերը՝ հարուցվել են 2013 թ.-ին:

2013 թ. ընթացքում 17 քրեական գործերից 7-ը ուղարկվել են դատարան, 4 -ը գտնվում են քննության ընթացքում, 2-ը կասեցվել է, 2 գործ վերավորակվել են ՀՀ քր. օր-ի 262-րդ հոդվածի և ուղարկվել է դատարան, 1 գործի վարույթը կարճվել է՝ գործի նյութերով հարուցվել է նոր քրեական գործ ՀՀ քր. օր-ի 262-րդ հոդվածի հատկանիշներով, 1 գործի վարույթը կարճվել է:

6 քրեական գործով դատապարտվել են 15 անձինք: Դրանք են՝

1. Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 18.05.2013թ. դատավճռով Անահիտ Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 132.2-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման 7 տարի ժամկետով:

Դատական ակտը ամբաստանյալի պաշտպանների կողմից բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան<sup>a</sup> պատժի խստության առումով: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշմամբ Անահիտ Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 132.2-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ դատապարտվել ազատազրկման 5 տարի ժամկետով:

2. Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 27.02.2013թ. դատավճռով Սուսաննա Մարտիրոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 6-րդ կետերով և դատապարտել ազատազրկման 8 տարի ժամկետով:

Նույն գործով Նարինե Մովսիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 6-րդ կետերով և դատապարտել ազատազրկման 7 տարի ժամկետով:

3. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին աստիճանի դատարանի 02.05.2013թ. դատավճռով Աղունիկ Այվազյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ու մինչև 2006 թվականի հուլիսի 16-ը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, և ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով դատապարտվել ազատազրկման 11 (տասնմեկ) տարի ժամկետով, իսկ մինչև 2006 թվականի հուլիսի 16-ը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով<sup>a</sup> ազատազրկման 6 (վեց) տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, որպես պատիժ՝ նշանակել ազատազրկում 11 (տասնմեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

Հասմիկ Առաքելյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել ազատազրկման 10 (տաս) տարի ժամկետով:

Ծովիկ Ավետիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել ազատազրկման 10 (տաս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով

Վահան Ավետիսյանը մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել ազատազրկման 10 (տաս) տարի ժամկետով:

Վահագն Ավետիսյանը մեղավոր է ճանաչվել մինչև 2010թ. հունվարի 2-ը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և դատապարտվել ազատազրկման 7 (յոթ) տարի ժամկետով:

Մարիամ Սարգսյանը մեղավոր է ճանաչել մինչև 2011թ. ապրիլի 9-ը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 132 հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով և դատապարտվել ազատազրկման 7 (յոթ) տարի ժամկետով:

Արմեն Վասիլյանը մեղավոր է ճանաչվել մինչև 2006 թվականի հուլիսի 16-ը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ու 3-րդ կետերով և դատապարտել ազատազրկման 4 (չորս) տարի ժամկետով

Հեղուշ Վասիլյանը մեղավոր է ճանաչվել մինչև 2006 թվականի հուլիսի 16-ը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ու 3-րդ կետերով և դատապարտել ազատազրկման 4 (չորս) տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ Հ.Վասիլյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել և սահմանել փորձաշրջան 2 (երկու) տարի ժամկետով:

4. Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների առաջին ատյանի դատարանի 12.06.2013թ. դատավճռով Արտավազ Մուրադյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով և դատապարտել ազատազրկման 10 տարի ժամկետով:

5. Երևան քաղաքի Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների առաջին ատյանի դատարանի 24.06.2013թ. դատավճռով Արթուր Խաչատրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքը վերադրակվել է 132-րդ հոդվածի 1-ին մասով: Նա մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետը անցած լինելու հիմքով: Դատական ակտը դատախազի կողմից բողոքարկվելու է:

6. Սյունիքի մարզի ընհանուր իրավասության դատարանի 27.12.2013թ. դատավճռով Անժելա Սազիյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 132.2-րդ հոդվածի առաջին մասով, 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, 144-րդ հոդվածով և 133-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ և դատապարտվել ազատազրկման 8 (ութ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման և որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, ու տուգանքի՝ ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

Նույն գործով Սիրուն Քոչինյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 132.2-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ և դատապարտվել ազատազրկման 7 (յոթ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման և որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու:

**ՀՀ ազգային անվտանգության ծառայություն**

2013թ. առաջին կիսամյակի ընթացքում ԱԱԾ կողմից հայտնաբերվել են թրաֆիքինգի նախանշաններով հանցագործության թվով երեք դեպքեր: Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական աշխատանքների արդյունքում թվով մեկ դեպքը բացահայտվել է, որի վերաբերյալ նախապատրաստված նյութերը ս. թ. դեկտեմբերին ուղարկվել են ՀՀ ԱԱԾ քննչական վարչություն: Մյուս երկու դեպքերի բացահայտման ուղղությամբ տարվում են աշխատանքներ: Նշված ժամանակահատվածում բազմաթիվ ՀՀ քաղաքացիների հետ իրականացվել են հարցումային աշխատանքներ՝ վերջիններիս հնարավոր թրաֆիքինգի ենթարկված լինելու հանգամանքը պարզաբանելու համար: ԱԱԾ ստորաբաժանումների կողմից շարունակվել են աշխատանքները նաև նախկինում հայտնաբերված թրաֆիքինգի դեպքերի ուսումնասիրման, կազմակերպիչների հայտնաբերման և հանցագործության բացահայտման ուղղությամբ: